Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 23-ի N 454 - Ն որոշման

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱԿԱԱԿԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Սույն ուղեցույցը սահմանում է հակաականային գործողությունների ազգային չափորոշիչների (այսուհետ՝ ՀԱԳԱՉ) դերը և հիմք է ծառայում այն ուղենիշ սկզբունքների համար, որոնցով առաջնորդվում են պետական կառավարման մարմինները, դոնորական և այլ կազմակերպություններ, որոնք ներգրավված են հակաականային գործողությունների պլանավորման ու իրականացման գործընթացում՝ թե՛ գլխամասային գրասենյակներում և թե՛ բուն դաշտային (գործնական) մակարդակներում:

I. ՀԱԿԱԱԿԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2. Հակաականային գործունեությունը գործողությունների համալիր է, որը նպատակ ունի նվազեցնելու ականների և պատերազմի պայթուցիկ մնացորդների (այսուհետ՝ ՊՊՄ) տարածման սոցիալական, տնտեսական և բնապահպանական վտանգավոր ազդեցությունը մարդու և հասարակության կենսագործունեության նկատմամբ, ապահովել տուժածների կարիքների բավարարումը, ականների և ՊՊՄ-ների ռիսկերը հասցնել այնպիսի նվազագույն մակարդակի, որը մարդուն հնարավորություն կտա ապրելու անվտանգ պայմաններում, իսկ հասարակության տնտեսական, սոցիալական և

առողջապահական զարգացումը կիրականացվի առանց ականների կողմից տարածված աղտոտվածության սահմանափակումների:

3. Հակաականային գործունեությունը բաղկացած է գործողությունների հետևյալ բաղադրիչներից՝

1) ականների վտանգի մասին իրազեկում (տեղեկատվություն) (այսուհետ՝ ԱՎԻ).

2) մարդասիրական ականազերծում, այսինքն՝ ականների և ՊՊՄ-ների հետազոտում, քարտեզագրում, տեղանքի նշում և վնասազերծում.

3) աջակցություն տուժածներին, այդ թվում՝ նաև վերականգնում և վերաինտեգրում.

4) ռեզերվների ոչնչացում.

5) հակահետևակային և հակահրասայլային ականների (այսուհետ՝ ՀՀԱ-ներ) կիրառման դեմ ուղղված քարոզչություն:

4. Հակաականային գործունեության բաղադրիչներին աջակցող գործողություններ են գնահատումը և պլանավորումը, ռեսուրսների կենտրոնացումը և բաշխումն ըստ գերակայությունների, տեղեկատվության կառավարումը, մարդկային հմտությունների զարգացման և կառավարման ուսուցումը (վերապատաստումը), որակի կառավարումը, սարքավորումների անվտանգ, արդյունավետ ու պատշաճ կիրառումը:

II. ՀԱԳԱՉ-ՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

5. ՀԱԳԱՉ-ների նպատակն է հակաականային գործունեության անվտանգության, արտադրողականության ու արդյունավետության բարելավումը, հակաականային գործունեության նկատմամբ համընդհանուր և հետևողական մոտեցման խթանումը:

6. ՀԱԳԱՉ-ներն ապահովում են հնարավորություն՝ հակաականային գործունեության մասին համայնքին տեղեկացնելու գոյություն ունեցող միջազգային կանոնակարգերի, կոնվենցիաների, դաշինքների և չափորոշիչների մասին, որոնք ազդում են հակաակա-

նային գործունեության վրա, հատկապես այն գործողությունների վրա, որոնք վերաբերում են մարդու հիմնարար իրավունքների, վնասազերծման պահանջների, վտանգների քարտեզագրման և ընդհանուր անվտանգության խնդիրներին:

III. ՈՒՂՂՈՐԴՈՂ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

7. ՀԱԳԱՁ-ների մշակումն ու կիրառումը ձևավորվել են հինգ ուղղորդող սկզբունքներով. առաջինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության իրավունքն է ազգային չափորոշիչներն ազգային ծրագրերում կիրառելը, երկրորդը՝ չափորոշիչները պետք է պաշտպանեն ամենամեծ ռիսկի ենթարկվածներին, երրորդը՝ շեշտը դրվում է հակաականային գործունեության համապատասխան չափորոշիչների մշակման, պահպանման ու կիրառման ազգային կարողության զարգացման վրա, չորրորդը՝ պահպանել համապատասխանությունն այլ միջազգային նորմերի ու չափորոշիչների հետ, և հինգերորդը՝ համաձայնեցում միջազգային կոնվենցիաների ու համաձայնագրերի հետ:

IV. ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Հակաականային գործունեության առաջնահերթ պարտավորությունն իրականացնելու համար լիազորված է ԱԳԱՄ-ը, որին էլ հանձնարարված են հակաականային գործունեության ազգային ծրագրի կանոնակարգումը, կառավարումն ու համակարգումը: ԱԳԱՄ-ը պատասխանատու է ազգային և տեղային պայմանների նախապատրաստման համար, որոնք հնարավոր են դարձնում հակաականային գործունեության արդյունավետ կառավարումը, ինչպես նաև պատասխանատու է հակաականային գործունեության ծրագրի բոլոր փուլերի և բոլոր կողմերի, այդ թվում՝ նաև հակաականային գործունեության չափորոշիչներից բխող կարգավորումների, ԳՍԸ-ների և հրահանգների մշակման համար:

9. Ականների և ՊՊՄ-ների մաքրումը մարդասիրական խնդիր է, և դրան հարկավոր է անդրադառնալ մարդասիրական տեսանկյունից: Այդ իմաստով չափորոշիչ-ների կառուցվածքը և դրանց կիրառումը հակաականային գործունեության ազգային ծրագրերում ու տեղային նախագծերում պետք է արտացոլեն չեզոքության, անկողմնակալության և մարդկության հիմնարար մարդասիրական սկզբունքները, որպեսզի հակաականային գործունեության ուշադրության կենտրոնում լինի օժանդակու-թյունն ամենակարիքավորներին:

V. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

10. Կարողությունների զարգացումն այն գործընթացն է, որի միջոցով անհատ-ները, հաստատություններն ու հասարակությունը (անհատապես և հավաքական ձևով) իրականացնում են գործառույթներ, լուծում խնդիրներ, նախանշում են նպատակներ և իրագործում դրանք:

11. Տեղային կարողություններն ունակությունն է պլանավորելու, համակարգելու, կառավարելու և ապահովելու հակաականային գործունեության մի այնպիսի ծրագիր, որը ծախսային առումով արդյունավետ է և հաշվետվողական, ի վիճակի է անդրադառնալու ականների ու ՊՊՄ-ների աղտոտվածության մարդասիրական և սոցիալ-տնտեսական հետևանքներին ու ապահովելու համապատասխան իրավական կարգավորումը:

VI. ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

12. ՀԱԳԱՉ-ները համապատասխանում են միջազգային չափորոշիչներին և բխում են միջազգային կոնվենցիաներից, համաձայնագրերից ու կանոնակարգերից:

13. Նախադեպերը և նորմերն արդեն գոյություն ունեն միջազգային մակար-դակում, հիմնականում Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) միջոցով՝

աշխատավայրում անվտանգության հարցերով, Ստանդարտների միջազգային կազմակերպությունը (ISO) տրամադրում է ուղեցույց ռիսկերի կառավարման (ISO ուղեցույց 51) և որակի համակարգերի կիրառման (ISO 9001:2000) վերաբերյալ, մի շարք միջազգային չափորոշիչների, արձանագրությունների և նորմերի միջոցով սահմանվում են կանոններ այն էլեկտրոնային տվյալների մշակման, փոխանակման և ցուցադրման մասին, որոնք կիրառվում են հակաականային գործունեության մասին տեղեկատվության կառավարման մեջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 23-ի N 454 - Ն որոշման

Չ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Չ Ն Ե Ր

ՀԱԿԱԱԿԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ

1. Սույն չափորոշիչները սահմանում են ուղեցույց և գործոններ, որոնք անհրաժեշտ են հակաականային գործողությունների ազգային ծրագիրը կազմելիս:

I. ՀԱԿԱԱԿԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

2. Հակաականային գործողությունների ազգային ծրագրի հիմքը կազմում են ականապատված տարածքների մասին առկա տեղեկատվությունը, ինչպես նաև գործողությունների պլանավորումը, որոնք հնարավորություն կտան վերջնական արդյունքում ունենալու ամբողջական տեղեկատվություն հակաականային գործունեության կարիքների ամբողջ ծավալի ու շրջանակի մասին: Նման պլանավորումը պետք է ապահովի, որ տեղեկությունների հավաքագրումն ու վերլուծությունն իրականացվեն գործնականորեն հնարավորինս կարճ ժամանակահատվածում, ինչպես նաև հնարավոր լինի գնահատել ծրագրի ազդեցությունն ականային վտանգի վերացման գործընթացի վրա:

3. Ծրագրի գնահատումը կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են արտակարգ իրավիճակների ուսումնասիրությունը, ականների ազդեցության հետազոտությունը (այսուհետ՝ ԱԱՀ) և ականների վտանգի մասին իրազեկումը (այսուհետ՝ ԱՎԻ): Այս գնահատման միջոցով հավաքագրված տեղեկատվությունը հետագայում կնպաստի հակաականային գործունեության միջամտության կարիքների պարզաբանմանը, ինչպես նաև հակաականային գործունեության այնպիսի ռազմավարության ստեղծմանն ու

քաղաքականության իրականացմանը, որը կապված կլինի զարգացման ազգային գերակայությունների հետ:

4. Ականների խնդրի իրական ծավալը կարող է դժվար գնահատելի լինել, որի կապակցությամբ տեղեկությունների հավաքագրումը, մշակումը, վերլուծությունը, պահպանումն ու կիրառումը պարտադիր են հակաականային գործունեության ծրագրի գործողության ամբողջ ընթացքում:

5. Հակաականային գործողությունների ազգային ծրագրի լիարժեք և ամբողջական ստեղծման համար կարող են խոչընդոտ հանդիսանալ հետևյալ պայմանները՝

1) ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը.

2) անվտանգության իրավիճակի անկայունությունը.

3) հակաականային գործունեության հումանիտար կազմակերպությունների ոչ լիարժեք ձևավորված լինելը:

6. Այն վայրերում, որտեղ սույն չափորոշիչների 5-րդ կետով սահմանված պայմաններն ազդում են հակաականային գործողությունների ծրագրի ստեղծման վրա, նախնական գործողություններ պետք է ձեռնարկվեն ծրագիրն ստեղծելու այնպիսի ռեսուրսներով, որոնք հնարավորություն կտան ամրագրելու հակաականային գործունեության անհետաձգելի գերակայությունները: Նշված գերակայությունները պետք է ներառեն ականներից տուժածներին աջակցությունը, ականների վտանգի մասին իրազեկումը, ինչպես նաև անհետաձգելի ականազերծումը՝ ապահովելու համար աջակցության գործակալությունների և մարդասիրական օգնության աշխատանքների իրականացումը: Պայմանների բարելավման դեպքում ծրագիրն ընդունակ պետք է լինի արագորեն ընդարձակելու հակաականային գործողությունների վայրերը:

7. Հակաականային գործողությունների ազգային ծրագրի ստեղծման և իրականացման կարևորագույն բաղադրիչ է գործընթացի ֆինանսավորումը: Այն կարող է

իրականացվել թե՛ պետական միջոցներով և թե՛ դոնորական կարգով: Բացի դրանից, ծրագրի կողմից կարող է հիմնադրվել հակաականային գործողությունների հոգաբարձուների իր սեփական հիմնադրամը: Միջազգային պրակտիկայում ընդունված է նաև օտարերկրյա պետությունների կողմից հակաականային գործունեության ֆինանսական աջակցությունը: Միաժամանակ, ուղղակի ֆինանսավորման փոխարեն կարող է իրականացվել գույքային աջակցություն, որը կարող է ներառել մասնագիտացված անձնակազմի, սարքավորումների, գույքի տրամադրումը:

8. Հակաականային գործողությունների ծրագրի ստեղծման համար էական նշանակություն ունի որակավորում ունեցող անձնակազմի առկայությունը թե՛ գործառնական մակարդակում՝ հակաականային գործողություններն իրականացնելու, և թե՛ ԱԳԱՄ-ի մակարդակում՝ հակաականային գործունեությունը կառավարելու և դրան աջակցելու համար: Անձնակազմին վերաբերող պահանջները, այդ թվում՝ նաև ուսուցման, պետք է ընդգրկված լինեն հակաականային գործունեության ծրագրի պլանավորման մեջ:

II. ՀԱԿԱԱԿԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄԸ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

9. Հակաականային գործողությունների ազգային ծրագրի կանոնակարգումը, կառավարումն ու համակարգումն իրականացվում են մեկ մակարդակում՝ Ականազերծման գործողությունների ազգային մարմնի (ԱԳԱՄ) միջոցով, որը պատասխանատու է հակաականային գործունեության ռազմավարության ստեղծման և քաղաքականության իրականացման, ընթացիկ կառավարման, իսկ որոշակի դեպքերում՝ նաև հակաականային գործողությունների նախագծերի իրականացման համար:

10. Հակաականային գործողությունների ազգային ծրագրի ստեղծման գործընթացում էական նշանակություն ունեն տարածքային (տեղական) պահանջները: ԱԳԱՄ-ի և ականազերծման գործողություններ իրականացնող ցանկացած այլ տեղական կազմակեր-

պության համար անհրաժեշտ են գրասենյակային հարմարություններ, որոնք պետք է ընտրվեն՝ հաշվի առնելով ականազերծման գործողությունների ծրագրի հավանական հետագա ընդարձակումը, և ապահովեն բավականաչափ տարածքի առկայություն ներգրավված գրասենյակների գործառնական բոլոր բաղադրիչների համար:

11. Պետք է հաշվի առնվեն նաև պայթուցիկ նյութերի (այդ թվում՝ նաև ԼՊՀ և տեղափոխման համար ապահով ՉԶ) պահեստավորման պահանջները, ինչպես նաև պետք է հարմարություններ ստեղծվեն ԱՊԶ-ի առաջադրանքների (ազատման գոտիներ) և սարքավորումների ՓԳ-ի համար:

12. ԱԳԱՄ-ը, պատասխանատու լինելով հակաականային գործունեության ռազմավարության ստեղծման և քաղաքականության իրականացման համար, պարտավոր է՝

1) իրականացնել ականազերծման գործողությունների օրենսդրական ապահովմանը վերաբերող ակտերի մշակումներ.

2) սահմանել գերակայությունները և աշխատանքային պլանները, Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել ականների ու ՊՊՄ-ների հետևանքների նվազեցման վերաբերյալ առաջարկություններ.

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանը, հանրությանը, դոնորներին և այլ համապատասխան շահառուներին հաշվետու լինել ականազերծման գործողությունների վերաբերյալ.

4) վերահսկել ականազերծման աշխատանքները.

5) ականազերծման գործողությունների խնդիրների վերաբերյալ խորհրդատվություն մատուցել Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ականազերծման գործողություններին վերաբերող միջազգային համաձայնագրերի, ինչպես նաև միջազգային դաշինքներին անդամակցելու արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարությանը սպասվող պահանջների և հետևանքների վերաբերյալ.

6) մշակել կանոնակարգեր և դրանք առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանը, որպեսզի միջազգային զարգացման գործակալություններին (երկկողմանի դոնորներին, ՄԱԿ-ի գործակալություններին, զարգացման բազմակողմանի բանկերին, ՀԿ-ներին և այլն) տրամադրվի ուղեցույց այն քայլերի առնչությամբ, որոնք պետք է արվեն, երբ Հայաստանի Հանրապետության տարածքում նրանց աշխատանքային ծրագրերը ենթարկվում են առկա ականների և ՊՊՄ-ների ազդեցությանը.

7) միջոցներ ձեռնարկել ազգային և միջազգային աղբյուրներից ռեսուրսների հավաքագրման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 23-ի N 454 - Ն որոշման

ԱԿԱՆԱՋԵՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

1. Հակաականային գործունեության մեջ օգտագործվող եզրույթներն ու հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը՝

1) ***լքված պայթուցիկ հրանոթներ (ԼՊՀ)***՝ պայթուցիկ հրանոթներ (անկախ լիցքավորված, համակցված կամ այլ ձևով օգտագործման համար նախապատրաստված լինելու հանգամանքից), որոնք չեն օգտագործվել զինված հակամարտության ընթացքում և թողնվել են զինված հակամարտության մասնակցի կողմից ու չեն գտնվում նրա վերահսկողության ներքո (ԿՈԶ արձանագիր V).

2) ***ընդունում***՝ հովանավորի կամ հովանավորի կողմից նշանակված ներկայացուցչի պաշտոնական ճանաչումն առ այն, որ սարքավորումները բավարարում են նշված պահանջները և համապատասխանում են հակաականային գործունեության ծրագրերում կիրառմանը: Ընդունումը կարող է ճանաչվել նաև չկատարված աշխատանքների մասին նախազգուշացումներով.

3) ***մուրք գործելու արահետ***՝ նշված անցուղի, որը տանում է դեպի վտանգի գոտի և մաքրվել է դեպի անհրաժեշտ կետ կամ տարածք անվտանգ շարժումն ապահովելու համար.

4) ***պատահար***՝ անցանկալի իրադարձություն, որը հանգեցնում է վնասի.

5) ***քարոզչություն***՝ հանրային աջակցություն, առաջարկություններ ներկայացնելը և օգտակար հրապարակայնություն, որի նպատակը վերացնելը կամ հնարավորինս նվազեցնելն է ականների կամ ՊՊՄ-ների ռիսկը և ազդեցությունը.

6) ***փոփոխված արձանագրություն II (ՓԱII)***՝ անհամաչափ վնասակար կամ խառը հետևանքներ ունեցող որոշակի սովորական զինամթերքի օգտագործման արգելքի կամ սահմանափակումների վերաբերյալ կոնվենցիայի (ՍՈՋ) Փոփոխված արձանագրություն II.

7) ***ականապաշտպանիչ սարք***՝ սարք, որը նախատեսված է պաշտպանելու ականները և որն ականի մաս է կազմում կամ միացված է դրան, կամ կցված, կամ դրված է դրա տակ և ակտիվացնում է այն, երբ փորձ է արվում որևէ ձևով միջամտել կամ մտածված կերպով շարժել ականը.

8) ***հակահետևակային ականների արգելման կոնվենցիա (ՀՀԱԱԿ)***՝ Օտտավայի կոնվենցիա Ականների արգելման համաձայնագիր.

9) ***հակահետևակային և հակահրաայլային ականներ***՝ ական, որը նախատեսված է պայթեցնել կենդանի ուժի կամ տեխնիկայի ներկայությամբ, մոտ հեռավորությամբ կամ շփման միջոցով, և որն անկարող է դարձնում, վիրավորում է կամ սպանում մեկ կամ ավելի թվով մարդկանց ու կենդանիների, վնասում և անօգտագործելի է դարձնում ցանկացած ռազմական և այլ տեխնիկա.

10) ***կիրառական հետազոտություն***՝ հետազոտություն, որը սևեռվում է հստակորեն սահմանված խնդիրների և շուկայական հնարավորությունների վրա.

11) ***տարածքի կրճատում՝*** գործընթաց, որի միջոցով ականապատված համարվող նախնական տարածքը (ՀԳԸՀ ընթացքում կատարված ընդհանուր հետազոտման կամ տեղեկությունների հավաքման այլ միջոցառումների արդյունքում) փոքրացվում է.

12) ***աուդիտ (ստուգում)՝*** պարբերական գործընթաց կամ համակարգային ստուգում, որի նպատակը հավաստիանալն է, որ մասնագրերը համապատասխանում են փաստաթղթում նշված որակի չափորոշիչներին: Ստուգման նպատակը հայտնաբերելն է փաստաթղթում նշված և կիրառված չափորոշիչների միջև անհամապատասխանություն-

ները: Այն կարող է նաև բացահայտել, թե որքանով է փաստաթղթում նշված չափորոշիչն օգնում կամ խոչընդոտում այդ պահին ընթացող գործընթացներին.

13) ***մարտի դաշտ***՝ տարածք, որտեղ հայտնաբերվել են ՉՊՀ և ԼՊՀ: Այն կարող է ներառել մարտական գործողությունների նախկին տարածքները, պաշտպանիչ դիրքերը և տեղամասերը, որտեղ թողնվել, արձակվել կամ գցվել են օդային ուղիներով բերված կամ հրետանու զինամթերքները.

14) ***մարտական գործողությունների տարածքի վերաձևավորում*** *(ՄԳՏՎ)*՝՝ այնպիսի վտանգավոր տարածքի պարբերական և վերահսկվող մաքրում, որում առկա չեն ականներ.

15) ***նիվելիրային նշագիր***՝ մարդասիրական ականազերծման համատեքստում՝ ամրակցված տեղեկատու նշան, որն օգտագործվում է նշագրված վտանգի կամ վտանգավոր տարածքի տեղը գտնելու համար: Այն սովորաբար պետք է տեղադրված լինի վտանգավոր տարածքից դուրս՝ կարճ հեռավորության վրա.

16) ***ռումբերի կենդանի միավոր***՝ ենթառազմամթերքի տեսակի նոմենկլատուրայի մաս.

17) ***ծուղակ ականներ***՝ պայթուցիկ կամ ոչ պայթուցիկ սարքեր կամ այլ նյութեր, որոնք վնասներ հասցնելու նպատակով կանխամտածված կերպով տեղադրվել են այն ժամանակ, երբ տեղաշարժվում է ակնհայտորեն անվտանգ իրը, կամ իրականացվում է որևիցե անվտանգ գործողություն.

18) ***սահմանային արահետ***՝ վտանգավոր տարածքը շրջագծող մաքրված սահմանագիծ.

19) ***դաշտ***՝ ուղղանկյուն տարածք, որն ստեղծված է ԱՀԾ-ի կողմից զննման ենթարկվելու նպատակով.

20) ***հրահանգավորման վայր***՝ մարդասիրական ականազերծման համատեքստում՝ հստակ նկատելի վերահսկիչ կետ, որպես կանոն՝ ականազերծման տեղանք մուտք գործելու առաջին կետը.

21) ***այրման վայր***՝ տարածք, որտեղ թույլատրված է զինամթերքի և պայթուցիկների ոչնչացումն այրման միջոցով.

22) ***ռիսկը ժխտված տարածք***՝ տարածք, որը նախկինում գրանցվել է որպես ռիսկային, ինչը, սակայն, ժխտվել է, և ժխտումը հետևանք չէ տարածքի ականազերծման կամ ՀՁ-ներից մաքրման.

23) ***ՈՍՁ՝*** (կոնվենցիա որոշակի սովորական զինամթերքի վերաբերյալ)՝ որոշակի զենքերի օգտագործման վերաբերյալ 1980 թվականի կոնվենցիա.

24) ***ՆԵԿ***՝ Նորմավորման եվրոպական կոմիտե.

25) ***ՄԵԿ***՝ Ստանդարտացման եվրոպական կոմիտե.

26) ***ՄԱՀ (ՄԵԿ աշխատախմբի համաձայնագրեր)***՝ համաձայնագիր, որն արտացոլում է այդ համաձայնագրի բովանդակության համար նախանշված պատասխանատու պարզորոշված անհատների և կազմակերպությունների կոնսենսուսը (միակարծությունը).

27) ***մաքրում՝*** պայթուցիկ զինամթերքի մաքրման (ՊԶՄ) առաջադրանք կամ գործողություն՝ որոշակի տարածքում առկա պայթուցիկ զինամթերքը վերացնելու կամ դրա վնասը նվազեցնելու նպատակով.

28) ***մաքրված տարածք***՝ ականազերծող կազմակերպության կողմից ֆիզիկապես և հետևողականորեն մշակված տարածք՝ որոշակի խորությունից բոլոր ականների և ՊՊՄ-ների հեռացումը և (կամ) վերացումն ապահովելու նպատակով.

29) ***ականազերծ արահետ***՝ արահետ, որը մաքրվել է ականներից՝ ականազերծված հողերին ներկայացվող չափանիշներին համապատասխան: Սրանք կարող են ներառել նաև վտանգի գոտուց դուրս գտնվող կամ վտանգ ներկայացնող տարածքի խաչվող կամ ստուգման արահետները: Այս բնորոշումը չի կիրառվում սահմանային արահետների նկատմամբ.

30) ***քլաստերային ռումբի բաժին***՝ ինքնաթիռի ընդլայնելի պահեստ, որը բաղկացած է դոզատորից և ենթառազմամթերքից, ռումբ, որը պարունակում է ենթառազմամթերք: Այդպիսիք կարող են լինել ականներ (հակահետևակային կամ հակատանկային), ներթափանցող փոքր ռումբեր, բեկորային փոքր ռումբեր և այլն.

31) ***համագործակցություն***՝ հակաականային գործունեության սարքավորումների գնման համատեքստում՝ գործողություն, որը վերաբերում է միմիայն երկու կամ ավելի կազմակերպությունների կողմից ընդհանուր սարքավորումների գնմանը.

32) ***համընդհանրություն***՝ հակաականային գործունեության սարքավորումների գնման համատեքստում՝ իրավիճակ, երբ անհատների կամ կազմակերպությունների խմբերն օգտագործում են համընդհանուր ընթացակարգեր և (կամ) սարքավորումներ.

33) ***համայնքի հետ կապի ապահովում՝*** ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովում, կապի ստեղծում ականների (ՊՊՄ) տարածքներ ունեցող համայնքների հետ, որի նպատակն է տեղեկություններ փոխանակել ականների (ՊՊՄ) առկայության և ազդեցության վերաբերյալ, հաշվետվական կապ ստեղծել ականազերծման գործողությունների ծրագրի հետ և մշակել ռիսկի կրճատման ռազմավարություններ: Համայնքի հետ կապի նպատակն է երաշխավորել, որ, ականազերծման գործողությունների ծրագիրը պլանավորելիս, իրականացնելիս և մոնիթորինգ իրականացնելիս, համայնքի կարիքները և գերակայություններն առաջնային են.

34) ***համատեղելիություն***՝ հակաականային գործունեության սարքավորումների գնման համատեքստում՝ սարքավորման կամ ապրանքի երկու կամ ավելի բաղադրիչների կամ ենթաբաղադրիչների ունակություն՝ գոյություն ունենալու կամ գործելու միևնույն միջավայրում՝ առանց միմյանց խանգարելու.

35) ***վերահսկման տարածք կամ կետ***՝ բոլոր կետերը կամ տարածքները, որոնք օգտագործվում են ականազերծման տեղանքի այցելուների և անձնակազմի տեղաշարժը վերահսկելու համար.

36) ***ծախսերի արդյունավետություն***՝ համակարգի գործնական կարողության և դրա կիրառման ամբողջ ընթացքի ընդհանուր ծախսի միջև հարաբերակցության գնահատական.

37) ***ծայրահեղ անհամապատասխանություն***՝ հետազոտման ընթացքում մեկ քառ. մետր մակերեսով հողակտորի վնասազերծման սահմանված պահանջները չբավարարելը: Այդպիսիք կարող են լինել ականի կամ ՊՊՄ-ի հայտնաբերումը, ինչպես նաև այլ անհամապատասխանություններ.

38) ***ապաբաղարկում***՝ փորձարկման տեղամասի նախապատրաստման ժամանակ կիրառվող փորձարկման առարկաներից, գործիքներից և օժանդակ պարագաներից անցանկալի աղտոտման հեռացման գործընթաց.

39) ***դեֆլագրացիա***՝ պայթուցիկների փոխարկումը գազային ապրանքների՝ պայթուցիկների մակերեսին կամ դրա մոտ (դետոնացիա).

40) ***ապառազմականացում***՝ զինամթերքն իր նախնական նպատակային օգտագործման համար ոչ պիտանի ճանաչելու գործընթաց.

41) ***ականազերծող***՝ անձ, որն ունի համապատասխան որակավորում և ընդգրկված է ականազերծման աշխատանքներում.

42) ***ականազերծում՝ (մարդասիրական ականազերծում)***՝ գործողություններ, որոնք հանգեցնում են ականների և ՊՊՄ-ի վտանգի վերացման՝ ներառյալ տեխնիկական հետազոտումը, քարտեզագրումը, բուն ականների վնասազերծումը, նշագրումը, հետականազերծման փաստաթղթերի կազմումը, ականազերծման գործողությունների ընթացքում համայնքի հետ կապի ապահովումը և ականազերծված (մաքրված) տարածքների հանձնումը.

43) ***ականազերծման վթար***՝ պատահար ականազերծման աշխատանքային տեղամասում, որտեղ կա ականների կամ ՊՊՄ-ի վտանգ (տես նաև՝ ականային պատահար).

44) ***ականազերծման վթարի արձագանքման պլան***՝ գրավոր փաստաթուղթ, որը կազմվում է ականազերծման յուրաքանչյուր աշխատանքային տեղամասի համար և նկարագրում է այն ընթացակարգերը, որոնք պետք է կիրառվեն տուժածներին ականազերծման վթարի տարածքից համապատասխան առողջապահական հաստատություն տեղափոխելիս.

45) ***ականազերծման պատահար***՝ ականների կամ ՊՊՄ-ի վտանգ պարունակող ականազերծման աշխատանքային տեղամասում տեղի ունեցած պատահար (տես նաև՝ ականային պատահար).

46) ***ականազերծող կազմակերպություն***՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ կազմակերպություն, որն իրականացնում է ականազերծման ծրագրեր կամ առաջադրանքներ: Ականազերծող կազմակերպությունը կարող է լինել հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ.

47) ***ականազերծող ստորաբաժանում***՝ ականազերծող կազմակերպության բաղադրիչ, ինչպես նաև ինքնուրույն մարմին, որը գործառնականորեն հավաստագրվել է ականազերծման մեկ կամ մի քանի հանձնարարված առաջադրանքներ իրականացնելու համար, ինչպիսիք են տեխնիկական հետազոտությունները, ձեռքով մաքրումները, ՊՀՀ կամ ԱՀՇ թիմերի օգտագործումը.

48) ***ականազերծման տեղանք***՝ ցանկացած աշխատավայր, որտեղ իրականացվում են ականազերծման աշխատանքներ.

49) ***ապամոնտաժում***՝ կառույցների, շինությունների կամ նյութերի քանդում՝ կրակի, ջրի, մեխանիկական կամ այլ միջոցների կիրառմամբ.

50) ***ոչնչացման վայր***՝ տարածք, որտեղ թույլատրված է ականների, զինամթերքի և պայթուցիկների ոչնչացումը՝ պայթեցման միջոցով.

51) ***տեղում՝ ոչնչացում՝ (տեղում՝ պայթեցում)՝*** հայտնաբերման վայրում ականի կամ միավոր զինամթերքի ոչնչացում պայթուցիկների միջոցով՝ առանց այն տեղաշարժելու կամ տեղափոխելու.

52) ***ոչնչացում՝*** ականի կամ զինամթերքի վերջնական չեզոքացում, որի արդյունքում դրանք այլևս չեն կարող շահագործվել իրենց նպատակային նշանակությամբ.

53) ***ոչնչացնող կազմակերպություն՝*** անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ կազմակերպություն, որն իրականացնում է ականների կամ զինամթերքի ոչնչացման ծրագրեր կամ առաջադրանքներ.

54) ***հայտնաբերում՝*** մարդասիրական ականազերծման համատեքստում՝ ականների կամ ՊՊՄ-ների առկայության բացահայտում ցանկացած ձևով.

55) ***դետոնացիա***՝ պայթուցիկների արագ փոխարկումը գազային ապրանքների՝ պայթուցիկի միջով անցնող շոկային ալիքի միջոցով (դեֆլագրացիա).

56) ***դետոնատոր***՝ սարք, որը պարունակում է զգայուն պայթուցիկներ, որոնք նախատեսված են դետոնացիոն ալիք առաջացնելու համար.

57) ***զինաթափում՝*** ականն ապահով դարձնելու գործողություն՝ հեռացնելով դրա հրահանը կամ բոցավառիչը.

58) ***զինամթերքից ազատման վայր***՝ տարածք, որտեղ թույլատրված է զինամթերքի և պայթուցիկների ոչնչացումը՝ պայթեցմամբ կամ այրմամբ.

59) ***ԴՆՏ (դինիտրոտոլուոլ)՝*** ՏՆՏ արտադրության մնացորդային արդյունք և ՏՆՏ քայքայման նյութ.

60) ***դոնոր***՝ հակաականային գործունեությունը ֆինանսավորող բոլոր աղբյուրները, այդ թվում՝ նաև ականապատված տարածքներ ունեցող պետությունների կառավարությունները.

61) ***ուսումնական զինամթերք***՝ զինամթերքի ներտ մոդել, որն արտադրված է հատկապես ուսուցման, ցուցադրման կամ հրահանգչական նպատակով.

62) ***երկպրակեցություն***՝ իրի կամ նյութի՝ ժամանակի ընթացքում և նախատեսված պայմաններում պահանջվող նպատակային նշանակությամբ օգտագործելու հնարավորություն.

63) ***հանդերձանք***՝ պաշտպանիչ հագուստի և պաշտպանիչ միջոցների հավաքածու.

64) ***շրջակա միջավայրի գործոններ***՝ գործոններ, որոնք կապված են շրջակա միջավայրի հետ և ազդեցություն են ունենում ականից հոտի տեղափոխման, թիրախային հոտի հայտնաբերման կամ մարդկանց ու շների՝ անվտանգ և արդյունավետ կերպով աշխատելու կարողության վրա.

65) ***շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում***՝ հակաականային գործունեության համատեքստում՝ շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցությունը սահմանելու, կանխելու, գնահատելու և մեղմելու գործընթաց, որն իրականացվում է մինչև որոշումների ընդունումը և պարտավորությունների ստանձնումը.

66) ***սարքավորում***՝ ֆիզիկական, մեխանիկական, էլեկտրական և (կամ) էլեկտրոնային համակարգ, որն օգտագործվում է՝ օժանդակելու համար մարդկային գործողություններին, ընթացակարգերին և փորձին.

67) ***գնահատում***՝ արդյունքի կամ արդյունքների շարքի վերլուծություն՝ սահմանելու համար համակարգչային փաթեթի, սարքավորման կամ համակարգի քանակական և որակական արդյունավետությունն ու արժեքն այն միջավայրում, որում այն գործելու է.

68) ***պայթեցման նյութեր***՝ ականազերծման գործընթացում օգտագործվող բաղադրիչներ (պայթուցիչներ, մարտական լիցքեր), որոնք կարող են առաջացնել պայթյուն.

69) ***պայթուցիկ հրանոթներ (ՊՀ)***՝ պայթուցիկ նյութեր, միջուկային բաժանիչներ, սինթեզող նյութեր, կենսաբանական և քիմիական ագենտներ պարունակող բոլոր զինամթերքները: Սրանք ներառում են ռումբերը և զինամասերը, ուղղորդվող և բալիստիկ հրթիռները, հրետանին, ականանետները, հրթիռներն ու փոքր զինամթերքների փամփուշտները, բոլոր ականները, տորպեդները և խորքային ռումբերը, հրատեխնիկան, կուտակումներն ու բաշխիչները, փամփուշտների և պայթուցիկ նյութերի միջոցով գործարկվող սարքերը, էլեկտրոնային պայթուցիկ սարքերը, թաքնված և իմպրովիզացված պայթուցիկ նյութերն ու գոյություն ունեցող բոլոր նման կամ հարակից իրերը կամ բաղադրիչները.

70) ***ձերբազատում պայթուցիկ զինամթերքից (ԱՊԶ)***՝ պայթուցիկ զինամթերքի հայտնաբերումը, բնորոշումը, գնահատումը, անվտանգ դարձնելը և դրանից ազատվելը.

71) ***պատերազմի պայթուցիկ մնացորդներ (ՊՊՄ)***՝ չպայթեցված զինամթերք (ՉԶ) և լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊԶ).

72) ***պայթուցիկ նյութեր***՝ նյութ կամ նյութերի խառնուրդ, որն արտաքին ազդեցությունների հետևանքով կարող է արագորեն էներգիա բաց թողնել՝ գազերի և ջերմության տեսքով.

73) ***ձախողում*** միջադեպ, որի ընթացքում որևէ համակարգ, սարքավորում, բաղադրիչներ կամ ենթաբաղադրիչներ չեն գործում իրենց նախանշված վիճակով.

74) ***իրագործելիության ուսումնասիրություն (ԻՈՒ)***՝ առաջադրանքների իրականացման և արդյունքների ստացման հնարավորություն՝ տեխնոլոգիական, ծախսային և ժամանակային առումով.

75) ***դաշտային խմբագիր***՝ անձ, որն ապահովում է դաշտի հաշվիչների կողմից հավաքագրված տեղեկությունների ճշգրտությունը, համապատասխանությունը, դյուրըմբռնելիությունը և հստակությունը.

76) ***«Ֆորս մաժոր»***՝ անկանխատեսելի հանգամանքներ, որոնք խոչընդոտում են որևէ կողմին՝ իրագործելու պայմանագրով սահմանված առաջադրանքը.

77) ***լիարժեք մշակում*** (ԼՄ)՝ ընթացակարգ, որը ներառում է ինժեներական բոլոր գործընթացները, փորձարկումներն ու ստուգումները՝ վերջնական մանրամասն դիզայնը հաստատելու նպատակով՝ հնարավորություն ընձեռելով լիարժեք արտադրության մեկնարկին.

78) ***հրահան***՝ սարք, որը գործի է դնում պայթյունի շղթան.

79) ***գենդերային ուղղորդում***՝ որևէ պլանավորված գործողության վրա կանանց և տղամարդկանց ազդեցության գնահատում, որի նպատակը բացառելն է հակաականային գործունեության շրջանակներում խտրականության դրսևորումը՝ սեռային հատկանիշից ելնելով.

80) ***հակաականային գործունեության ընդհանուր գնահատում (ՀԱԳԸԳ)***՝ շարունակական գործընթաց, որի միջոցով հնարավոր է իրականացնել ականների կամ ՊՊՄ-ների թունավորմամբ բոլոր հայտնի և (կամ) կասկածյալ տեղանքների, ինչպես նաև պայթուցիկ վտանգների քանակության և տեսակների, հողի տեղանքային առանձնահատկությունների, բուսականության և կլիմայի մասին տեղեկատվության համապարփակ գույքագրում, այդ թվում՝ նաև ականների խնդրի ծավալի ու դրանց կողմից անհատի, համայնքի ու պետության վրա առաջացրած հետևանքների գնահատում.

81) ***գեոհղում*** գործընթաց, որով աղյուսակային տվյալներին ավելացվում են գրաֆիկական կոորդինատներ կամ անուղղակի հղումների այլ կոդեր, որպեսզի հնարավոր լինի տվյալների շարքի ընդհանուր տեղակայումների հիման վրա իրականացնել պարզ համեմատություն, խմբավորում և վերլուծություն.

82) ***աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ)***՝ համակարգչային տեխնիկայի, ծրագրերի, աշխարհագրական տվյալների և անձնակազմի համապարփակ

հավաքածու, որի նպատակն է արդյունավետ պատկերահանել, պահպանել, թարմացնել, կիրառել, վերլուծել և ցուցադրել բոլոր տեսակի աշխարհագրական տեղեկությունները.

83) ***հողի նախապատրաստում՝*** ականապատ կամ վտանգավոր տարածքում մեխանիկական միջոցներով հողի նախապատրաստում՝ վնասազերծման համար խոչընդոտների նվազեցման կամ հեռացման միջոցով (օրինակ, թաքնված լարեր, բուսականություն, մետաղական աղտոտումներ և պինդ հող)՝ հետագա վնասազերծման աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Հողի նախապատրաստումը կարող է ներառել նաև ականառումբերի պայթեցումը, վերացումը կամ հեռացումը.

84) ***ուղեցույց՝*** ՀԱԳԱՁ-ի ձեռնարկ, որն ընդհանուր կանոններ, սկզբունքներ, խորհուրդներ և տեղեկություններ է.

85) ***հանձնում՝*** գործընթաց, որով շահառուն (օրինակ, ԱԳԱՄ-ը տեղական համայնքի կամ հողօգտագործողի անունից) ստանձնում է ականազերծված տարածքի համար պատասխանատվությունը.

86) ***հանձնման վկայագիր՝*** փաստաթուղթ, որով գրանցվում է ականազերծված հողի հանձնումը.

87) ***վտանգի (վտանգավոր) տարածք (ականապատ տարածք)՝*** վայր, որը չի օգտագործվում ականների կամ որևէ այլ ՉՁ-ի ենթադրվող կամ փաստացի առկայության պատճառով.

88) ***վտանգի նշագրեր՝*** ականների և ՉՁ-ի վտանգի տարածքի սահմանները մատնանշող նշաններ.

89) ***վտանգի նշագրման համակարգ՝*** ականների և ՉՁ-ի վտանգից նախազգուշացնող ու պաշտպանող ցուցիչների ընդհանրություն: Համակարգը կարող է ներառել նշանների կամ նշագրերի կիրառումը կամ ֆիզիկական խոչընդոտների կառուցումը.

90) ***վտանգի նշան՝*** նշագրման համակարգի շրջանակներում տեղադրված ցուցիչ, որը նպատակ ունի նախազգուշացնելու ականների կամ ՉՔ-ի առկայության մասին.

91) ***վտանգավոր իրավիճակ՝*** հանգամանք, որում մարդիկ, գույքը կամ շրջակա միջավայրը ենթարկվում են մեկ կամ ավելի վտանգների.

92) ***հետևանք՝*** սոցիալական և տնտեսական զրկանքների մակարդակը, որին ենթարկվում է համայնքը՝ ականների և ՊՊՄ-ների վտանգի և վտանգավոր գոտիների առաջացրած վնասի կամ վնասի ռիսկի արդյունքում.

93) ***ազդեցությունից զերծ տարածք՝*** ականապատ տարածքների առկայություն, որը, սակայն, բացասական սոցիալ-տնտեսական ազդեցություն չի ունենում համայնքի վրա, օրինակ, ականները կարող են լինել հեռավոր, նշագրված և չբնակեցված վայրերում.

94) ***իներտ զինամթերք՝*** զինամթերք, որը չի պարունակում պայթուցիկ, պիրոտեխնիկական, արցունքաբեր, ռադիոակտիվ, քիմիական, կենսաբանական կամ այլ թունավոր բաղադրիչներ կամ նյութեր.

95) ***ստուգազննում՝*** ապրանքի կամ ծառայության մեկ կամ մի քանի բաղադրիչ-ների դիտարկում, չափում, ստուգում, փորձարկում, գնահատում կամ չափագրում և այդ ամենի համեմատում սահմանված պահանջների հետ՝ համապատասխանությունը որոշելու նպատակով.

96) ***գնահատող մարմին՝*** կազմակերպություն, որն իրականացնում է հետմաքրման ՈՎ՝ կիրառելով պատահական ընտրանքի ստացման ընթացակարգերը կամ ստուգման այլ պատշաճ և համաձայնեցված մեթոդներ.

97) ***նպատակային օգտագործում (հողատարածքի)՝*** ականազերծման գործողու-թյուններից հետո հողատարածքի օգտագործում.

98) ***փոխանակելիություն՝*** հակաականային գործունեության սարքավորումների գնման համատեքստում՝ գործողություն, երբ սարքավորման երկու կամ ավելի պարա-

գաներ ունեն այնպիսի գործնական և ֆիզիկական հատկություններ, որոնք համարժեք են իրենց գործողությամբ ու երկարակեցությամբ և ընդունակ են միմյանց փոխարինելու՝ առանց ձևափոխման կամ հարմարեցման.

99) ***միջանկյալ կետ՝*** միմյանցից 50 մետր հեռավորությունը գերազանցող շրջադարձերի միջև օգտագործվող հետազոտման նշագրեր.

100) ***հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ)՝*** միջազգային փաստաթղթեր, որոնց նպատակը հակաականային գործողությունների անվտանգությունն ու արդյունավետությունը մեծացնելն է՝ տրամադրելով ուղեցույց և սահմանելով սկզբունքներ.

101) ***ստանդարտացման միջազգային կազմակերպություն (ISO)՝*** ազգային մարմիններից կազմված համաշխարհային ֆեդերացիա, որոնց կողմից կազմված միջազգային համաձայնագրերը հրատարակվում են որպես ISO-ի չափորոշիչներ և ուղեցույցներ.

102) ***ինվազիվ մեքենա՝*** հակաականային գործունեության համատեքստում մեքենասարքավորումներ, որոնք նախագծված են վտանգավոր տարածքներում աշխատելու համար, իսկ «ոչ ինվազիվ մեքենա» անվանմամբ մեքենասարքավորումները նախագծված են վնասազերծված կամ անվտանգ տարածքներում աշխատելու համար, սակայն նրանց մեխանիկական գործիքները կարող են օգտագործվել վտանգավոր տարածքներում.

103) ***արցունքաբեր գինամթերք՝*** քիմիական բաղադրիչներ պարունակող գինամթերք, որը նախատեսված է որոշակի ժամանակահատվածով արցունքներ առաջացնելու կամ աչքի լորձաթաղանթը գրգռելու միջոցով մարդուն անկարող դարձնելու համար.

104) ***ականների ազդեցության հետազոտում (ԱԱՀ)՝*** ականների և ՉԶ-ի փաստացի կամ ենթադրյալ առկայության սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատում՝ հակաականային գործողությունների ծրագրերի պլանավորման և առաջնահերթությունների սահմանման նպատակով.

105) ***զինապահեստ***՝ հակաականային գործողությունների համատեքստում՝ շենք, կառույց կամ կոնտեյներ, որն օգտագործվում է պայթուցիկ նյութեր պահելու համար.

106) ***մեխանիկական ականազերծման գործողություններ***՝ ականազերծման գործողություններ՝ մեքենասարքավորումների օգտագործմամբ.

107) ***մեխանիկական գործիքներ***՝ ականազերծիչներ, լծակներ, ֆիլտրեր, ցանցեր, գլաններ, հողափորներ, գութաններ, մագնիսներ և այլն: Մեկ մեքենասարքավորման մեջ կարող են օգտագործվել մի շարք գործիքներ, որոնք կարող են լինել հաստատուն կամ միմյանց փոխադարձաբար փոխարինող.

108) ***բուժանձնակազմ***՝ ականազերծող կազմակերպության աշխատողները, ովքեր կոչված են վթարի արդյունքում վիրավորված ականազերծողներին ցուցաբերելու առաջին բուժօգնություն և հետագա բուժում, անցել են համապատասխան դասընթացներ և ունեն անհրաժեշտ սարքավորումներ.

109) ***ական***՝ պայթուցիկ նյութով լիցքավորված սարք, որը նախատեսված է հողի կամ էլ որևէ այլ մակերեսի տակ, վրան կամ կողքին տեղադրելու և մարդու կամ սարքավորման անմիջական ներկայության, մոտ հեռավորության կամ շփման միջոցով պայթեցնելու համար.

110) ***ականային պատահար***՝ ականազերծման աշխատավայրից հեռու պատահար, որն ականի կամ ՊՊՄ-ի վտանգ է պարունակում.

111) ***հակաականային գործունեություն***՝ գործողություններ, որոնց նպատակն ականների և ՊՊՄ-ի սոցիալ-տնտեսական ու բնապահպանական բացասական ազդեցությունը մեղմելն է.

112) ***հակաականային գործողությունների կենտրոն (ՀԱԳԿ)***՝ հակաականային գործողությունները համակարգող կենտրոնական մարմին, որն իրականացնում է ԱՎԻ-ի ուսուցում, ականապատ տարածքների հետազոտում, ականների մասին տվյալների հավաքում և կենտրոնացում, համակարգում է հակաականային գործողությունների

տեղական պլաններն արտաքին գործակալությունների, ՀԿ-ների կամ տեղական ականազերծողների հակաականային գործողությունների հետ.

113) ***հակաականային գործունեության կազմակերպություն***՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ կազմակերպություն, որն իրականացնում է հակաականային գործունեության նախագծեր կամ խնդիրներ.

114) ***ականներ հայտնաբերող շներ (ԱՀՇ)***՝ շուն, որը վարժեցված է և օգտագործվում է ականներ, ՊՊՄ-ներ և այլ պայթուցիկ նյութեր հայտնաբերելու համար.

115) ***ականազերծ տարածք***՝ հատկորոշված խորությամբ ականներից մաքրված տարածք.

116) ***ականների վտանգ***՝ ականի կամ ՊՊՄ-ի ոչ միտումնավոր պայթեցման արդյունքում մարդկանց, գույքին կամ շրջանա միջավայրին հասցվող ֆիզիկական վնասի հավանականություն և ուժգնություն.

117) ***ականների վտանգի իրազեկում (ԱՎԻ)***՝ գործողություններ, որոնք նպատակ ունեն նվազեցնելու ականի կամ ՊՊՄ-ի պայթեցման արդյունքում հասցվող վնասը՝ մարդկանց իրազեկվածության աստիճանը բարձրացնելու և վարքագծային փոփոխություններ քարոզելու միջոցով, այդ թվում՝ հանրային տեղեկատվության տարածումը, իրազեկումը և ուսուցումը, ինչպես նաև հակաականային գործողություններում համայնքի հետ կապի ապահովումը.

118) ***ականի նշան***՝ նշագրման համակարգի մաս կազմող՝ մատնանշող ցուցիչ, որը տեղադրված և նախատեսված է մարդկանց նախազգուշացնելու ականների առկայության մասին.

119) ***ականապատված գոտի***՝ ականների իրական կամ ենթադրյալ առկայությամբ պայմանավորված վտանգավոր տարածք.

120) ***ականադաշտ***՝ հողակտոր, որը պարունակում է ականներ.

121) ***մոնիթորինգ***՝ հակաականային գործունեության համատեքստում՝ դիտարկում, ստուգում կամ գնահատում աշխատակետերի, հարմարությունների, սարքավորումների, գործողությունների, գործընթացների, ընթացակարգերի և գործավարության ոլորտներում.

122) ***զինամթերք***՝ պայթուցիկ նյութերով, վառելիքով, հրատեխնիկայով, մեկնարկող նյութերով կամ միջուկային, կենսաբանական կամ քիմիական նյութերով լցված ամբողջական սարք՝ ռազմական գործողություններում օգտագործելու նպատակով, ներառյալ ականառումբերը.

123) ***ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)***՝ ականազերծման գործողությունների կարգավորման, կառավարման և համակարգման համար պատասխանատու ճանաչված կազմակերպություն.

124) ***չեզոքացում***՝ հակաականային գործունեության համատեքստում՝ անվտանգության սարքերը փոխարինելու գործողություն, օրինակ, մեխերի կամ ձողիկների տեղադրում պայթուցիկի մեջ՝ կանխելու համար հրահանի կամ բոցավառիչի գործարկումը.

125) ***չբոցավառվող նյութեր***՝ նյութ, որն ինքնաբերաբար կամ շփման կամ գործիքով կամ այլ առարկայով հարվածելիս կայծ չի առաջացնում.

126) ***հերմետքրման ստուգում***՝ մարդասիրական ականազերծման համատեքստում՝ գործողություն, որը վերաբերում է մաքրված հողատարածքի նմուշի չափմանը, հետազոտությանը, փորձարկմանը կամ մաքրման պահանջների հետ այլ կերպ համեմատմանը.

127) ***կապսուլ***՝ ինքնապարփակ զինատեսակ որը տեղադրված է քարթրիջի կամ կրակող մեխանիզմի մեջ և գործարկող լիցքը բռնկելու միջոց է ապահովում.

128) ***ստուգազննում***՝ ականազերծման ժամանակ կիրառվող ընթացակարգ, որի ժամանակ ստուգվում է հողաշերտը՝ ենթամակերեսային ականների (ՊՊՄ) առկայությունը պարզելու համար.

129) ***արձանագիր V՝*** ԿՈՋ արձանագիր V Պատերազմի պայթուցիկ մնացորդների վերաբերյալ.

130) ***հանրային իրազեկում՝*** ականների և ՊՊՄ-ների վտանգների մասին ընդհանուր իրազեկման բարձրացմանն ուղղված գործընթաց՝ հանրային տեղեկատվության, պաշտոնական և ոչ պաշտոնական կրթման համակարգերի միջոցով.

131) ***ռապտերային տվյալներ՝*** երևակայական վանդակացանցի կիրառում՝ լանդշաֆտը ներկայացնելու համար: Կետային առանձնահատկությունները ներառված են որպես առանձին սյունակային (տողային) մուտքեր ցանցում: Գծերը հատկորոշված են որպես իրար միացված վանդակների համակցություն, իսկ տարածքներն առանձնանում են որպես մի պատկեր, որը կազմում են բոլոր վանդակները միասին.

132) ***RDX (1, 3, 5-տրիազացիկլոհեքսան) RDX (1, 3, 5-triazacyclohexane)՝*** ռազմական պայթուցիկ նյութ է, որն օգտագործվում է որպես պայթուցիկ նյութ մեծ քանակությամբ զինամթերքների պատրաստման գործում.

133) ***ճանաչման ենթակա կտոր՝*** մետաղյա կտոր, որը տեղադրվում է փորձարկվող իրերի տակ՝ դրանք մետաղորսիչի կողմից ճանաչելի դարձնելու համար.

134) ***կողմնորոշիչ ուղենիշ (ցամաքային ուղենիշ)՝*** վտանգավոր տարածքից դուրս որոշակի հեռավորության վրա տեղադրվող ամրակցված նշաձող: Այն պետք է լինի հեշտությամբ ճանաչվող և մշտական օգտագործման նշան (օրինակ, խաչմերուկներ, կամրջի կամարակալ), որոնք կարող են օգտագործվել մեկ կամ ավելի նշագրերի տեղափոխման համար.

135) ***տվյալների շրջեմարանի հարաբերակցական կառավարման համակարգ՝*** (RDMS) համակարգ, որը կիրառում է նույնականացման ծածկագրեր՝ բազմաթիվ աղյուսակներ միմյանց կապելու համար: Օգտագործվող ծածկագրերը հարաբերակցություն են հաստատում տվյալների աղյուսակների միջև: RDMS-ն արդյունավետ է մեծ

քանակությամբ տվյալների կառավարման համար և թույլ է տալիս մանրամասն հարցումներ կատարել՝ կուտակված տվյալների միջև հարաբերությունն այլ գրառումների նկատմամբ հաստատելու համար.

136) ***ռիսկ***՝ վնասի հավանականության և դրա ուժգնության համադրությունը.

137) ***ռիսկի վերլուծություն***՝ առկա տեղեկատվության համակարգված օգտագործում՝ վտանգները հայտնաբերելու և ռիսկը գնահատելու նպատակով.

138) ***ռիսկի նվազեցում***՝ գործողություններ, որոնք կատարվում են նվազեցնելու համար կոնկրետ ռիսկի հավանականությունը կամ դրա հետ կապված բացասական հետևանքները կամ երկուսը միասին.

139) ***մնացորդային ռիսկ***՝ մարդասիրական ականազերծման համատեքստում՝ նշագրված տարածքում սահմանված խորությամբ ականների և ՀՁ-ների հայտնաբերումից և վնասազերծումից հետո հնարավոր վտանգի առկայություն.

140) ***նմուշ***՝ մարդասիրական ականազերծման համատեքստում՝ հողատարածքից պատահականորեն ընտրված 1.0 քառ. մետր մակերեսով մեկ կամ մի քանի հողակտորներ.

141) ***նմուշների փորձարկման նախագիծ***՝ մարդասիրական ականազերծման համատեքստում՝ գործողություն, որը ներկայացնում է յուրաքանչյուր հողատարածքից ստուգման ենթակա 1.0 քառ. մետր մակերեսով հողակտորների թիվը (նմուշի չափը կամ նմուշների չափերի շարքը) և հողատարածքի ընդունելի լիենելու փաստը սահմանող համապատասխան չափանիշները (ընդունման և մերժման թվերը).

142) ***ականապրումներ***՝ ականազերծման ընթացքում կիրառվող ընթացակարգ, երբ այլ գործողությունների հետ համատեղ հողը մաքրվում է անվտանգ մեկնարկային կետից սկսած՝ հողը փորելով և շարժվելով դեպի առաջ.

143) ***հոտ***՝ զգայականորեն տարբերակվող բույր.

144) ***երկրորդային բեկորապատված՝*** պայթեցման ժամանակ արտանետվող հողի կտոր կամ քարային միացություն, որն ականի (ՊՊՄ) մասը չէր կազմում.

145) ***ինքնաչեզոքացում՝*** կանի մաս կազմող սարքի միջոցով իրականացվող գործողություն, որն ականը դարձնում է չաշխատող, բայց ոչ միանշանակ անվտանգ դրա հետ աշխատելու համար.

146) ***սահմանված տարածք և տարածքի խորություն՝*** մարդասիրական ականազերծման համատեքստում՝ տարածք և դրա այն խորությունը, որի համար պայմանագիր կամ համաձայնագիր է կնքվել՝ իրականացնելու ականներից կամ ՊՊՄ-ներից մաքրման գործողություններ.

147) ***որակի որոշված սահման (ՈՈՍ)՝*** մարդասիրական ականազերծման համատեքստում՝ վնասազերծման գործողություններից ակնկալվող արդյունքի հստակեցում.

148) ***գործառնությունների ստանդարտ ընթացակարգեր (ԳՍԸ) գործող գործառնական կարգ) (ԳԳԿ)՝*** հրահանգներ, որոնք սահմանում են գործառնական առաջադրանքը կամ գործողությունն իրականացնելու նախընտրած կամ գործող եղանակը.

149) ***գործնական կարիքների հայտարարություն (ԳԿՀ)՝*** փաստաթուղթ, որը նկարագրում է օգտագործողի գործնական պահանջները.

150) ***պահանջների հայտարարություն (ՊՀ)՝*** փաստաթուղթ է, որը մանրամասն ձևակերպում է նախընտրած լուծման միջոցով արդյունքի հասնելու եղանակները.

151) ***ենթառազմամթերք՝*** ռազմամթերքի մաս, որն օգտագործման նպատակով հնարավոր է անջատել ռազմամթերքից, ինչպես նաև ական կամ ռազմամթերք, որը կազմում է հրետանային փամփուշտի կամ հրթիռային ականի պայթյունի ուժգնության մասը.

152) ***հանձնարարության տարբերահամար (ID)՝*** վտանգավոր տարածքը մատնանշող տարբերակիչ համարներ.

153) ***ՏՆՏ (2, 4, 6 տրինիտրոտոլուոլ (տրոտիլ)***՝ լայն տարածում ունեցող ռազմական պայթուցիչ, որն օգտագործվում է ականներում և զինամթերքներում: ՏՆՏ-ն չափազանց կայուն է, ոչ հիգրոսկոպիկ և համեմատաբար ոչ զգայուն արտաքին ազդեցությունների, շփման, շոկի և էլեկտրաստատիկ էներգիայի նկատմամբ.

154) ***շրջադարձ***՝ գետնին ամրակցված կետ, որը ցույց է տալիս վտանգավոր տարածքի շրջագծի ուղղության փոփոխությունը: Այն պետք է հստակորեն նշագվի և գրանցվի: Հողում թաղված մետաղյա առարկաները պետք է օգտագործվեն բոլոր շրջադարձերը նշագրելու համար՝ դրանց առկայության մասին տեղեկացնելու նպատակով.

155) ***չպայթած զինամթերք (ՉԶ)***՝ պայթուցիկ զինամթերք, որը լիցքավորվել է, ձուլվել (հագեցվել) պայթուցիչով, զինվել կամ որևէ այլ կերպ նախապատրաստվել օգտագործման համար կամ օգտագործվել է: Այն կարող է լինել հրանետված, ցած գցված, տեղադրված կամ նախատեսված, սակայն դեռևս չպայթեցված՝ ձախողման պատճառով, շահագործման կառուցվածքից ելնելով կամ այլ պատճառով.

156) ***ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)***՝ ՄԱԿ-ի կազմում գործող կառույց.

157) ***վեկտորային տվյալներ***՝ X, Y կոորդինատների կիրառում՝ լանդշաֆտի երեք հիմնական առանձնահատկությունները՝ կետը, գիծը և տարածքները գտնելու համար: Կետերը (քաղաքներ, միջադեպերի վայրեր և այլն) ներկայացվում են X, Y կոորդի-նատների եզակի զույգի միջոցով: Գծերը (ճանապարհներ, գետեր և այլն) ներկայացվում են հերթականությամբ միմյանց միացված X, Y կոորդինատային կետերի շարքի միջոցով: Տարածքները կամ պոլիգոնները (լճեր, սահմաններ և այլն) ներկայացվում են X, Y կոորդի-նատային խմբի միջոցով, որոնք, միմյանց միանալով, փակ շղթա են կազմում՝ առանձ-նացնելով ներսի տարածքը.

158) ***փուժած***՝ անձ, ով վնաս է կրել ականի կամ ՊՊՄ-ի վթարի (դժբախտ պատահարի) արդյունքում.

159) ***աջակցություն տուժածներին (աջակցություն փրկվածներին)՝*** օգնության, օժանդակության և հոգատարության ամբողջ ծավալը, որը տրամադրվում է տուժածներին (այդ թվում՝ նաև փրկվածներին).

160) ***սպիտակ ֆոսֆոր՝*** մաքրած մեղրամոմի կամ պարաֆինի տեսքով, օդում՝ ինքնաբոցավառվող, քիմիապես ակտիվ և խիստ թունավոր նյութ, որը կարող է օգտագործվել ծուխը բացահայտելու նպատակով.

161) ***աշխատավայր՝*** այն բոլոր վայրերը, որոնք գտնվում են գործատուի ուղղակի կամ անուղղակի վերահսկողության ներքո, և որտեղ իրենց աշխատանքի բերումով պետք է գտնվեն կամ մեկնեն աշխատողները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 23-ի N 454 - Ն որոշման

Չ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Չ Ն Ե Ր

ՀԱԿԱԱԿԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

1. Սույն չափորոշիչները սահմանում են հակաականային գործողությունների տեղեկատվական արդյունավետ կառավարման սկզբունքներն ու կարգը:

I. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2. Հակաականային գործողությունների տեղեկատվական կառավարման արդյունավետ համակարգ ստեղծելու և դրա ընթացքն ապահովելու նպատակով սահմանվող նախապայմաններն են՝

1) փաստաթղթերի կառավարումը: Փաստաթղթերի կառավարման համակարգը պետք է պարունակի առնվազն հետևյալ հատկանիշները՝

ա. թվայնացված համակարգ՝ միասնական և ստանդարտացված թվային կառույց՝ ֆայլերի անվանման համապատասխան ուղեցույցներով, որն ի վիճակի կլինի կառավարել հակաականային գործողություններին առնչվող թվայնացված փաստաթղթերը,

բ. փաստաթղթային կառուցվածք՝ միասնական և ստանդարտացված փաստաթղթային կառույց, որն արտացոլում է թվայնացված կառույցը:

Փաստաթղթերի կառավարման համակարգը պետք է հնարավորություն ընձեռի հետևելու, թե ով է ձևափոխել փաստաթուղթը և որ տարբերակն է վերջինը.

2) հաշվառման կառավարումը: Հաշվառման կառավարման համակարգը պետք է ի վիճակի լինի բավարարել հետևյալ պահանջները՝

ա. գործառնական և երկրորդային տվյալների կառավարում,

բ. գործառնական ռեսուրսների առաջնայնության սահմանում և բաշխում,

գ. գործառնական ընթացքի և ռեսուրսների բաշխման վերանայում,

դ. գործառնական և կառավարման անձնակազմի համար հասանելիություն,

ե. հակաականային գործողությունների ծրագրին հարմարվողականություն և այլ տեղեկատվական համակարգերի հետ համատեղելիություն:

3. Տեղեկատվական կառավարման արդյունավետությունն ապահովելու նպատակով հակաականային գործողությունների ծրագրերով պետք է գործեն հետևյալ պարտադիր հաստիքները՝

1) տեղեկատվական կառավարման պատասխանատու.

2) ցանցային ադմինիստրատոր.

3) աշխարհագրական տեղեկատվական համակարգի (ԱՏՀ) պատասխանատու:

4. Տեղեկատվական կառավարման համակարգում ընդգրկված՝

1) համակարգիչները պետք է բավարարեն ծրագրային ապահովմամբ ներկայացվող նվազագույն պահանջները.

2) սարքավորումների ծրագրային ապահովումը պետք է լինի լիցենզավորված.

3) համակարգիչները պետք է պաշտպանված լինեն հոսանքի տատանումներից.

4) պետք է ներդրված լինեն տեղեկատվության պահպանման պատշաճ համակարգեր, որոնք կապահովեն տեղեկատվության կրկնայնացումը (back-up):

5. ԱՏՀ-ն պետք է բավարարի առնվազն հետևյալ պահանջները՝

1) ԱՏՀ-ի ծրագրային ապահովումը պետք է հասանելի լինի տեղեկատվական կառավարման համակարգի համար: Տեղեկատվական համակարգը կամ պետք է ինտեգրված լինի հաշվառումների համակարգում, կամ պետք է ինքնուրույն աշխատելու հնարավորություն ունենա.

2) աշխարհագրական տարածական տեղեկատվությունը պետք է հասանելի և մատչելի լինի.

3) տարածական տեղեկատվությունը պետք է նշվի կոորդինատներով կամ չափման այլ նշաններով.

4) տեղեկատվության հավաքագրման ձևերը պետք է պարունակեն ակնկալվող արդյունքն ստանալու համար անհրաժեշտ տարածական տեղեկատվություն:

6. Որակի կառավարման համակարգը պետք է համապատասխանի առնվազն հետևյալ պահանջներին՝

1) պետք է ունենա միասնական և ստանդարտացված տեղեկատվության հավաքագրման ձևեր.

2) տեղեկատվության հավաքագրման ձևում դաշտերը պետք է հստակ նշված լինեն.

3) տեղեկատվական կառավարման բոլոր փուլերում պետք է առկա լինեն որակի կառավարման համակարգեր:

II. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՒԼԸ

7. Տեղեկատվական կառավարման փուլը տեղեկատվության անհրաժեշտության գնահատման, տեղեկատվության հավաքման, տեղեկատվության վերլուծության և տեղեկատվության տարածման գործընթաց է: Տեղեկատվության կառավարման փուլը պետք է հիմնված լինի առնվազն հետևյալի վրա՝

1) տեղեկատվության շարունակական փոխակերպում տեղեկության, և տեղեկության փոխակերպում գիտելիքի, որն անհրաժեշտ է որոշման ընդունման համար.

2) արդյունավետություն՝ տեղեկատվության և տեղեկության կառավարումն իրականացվում է պրոակտիվ մոտեցմամբ, որտեղ տեղեկատվական կառավարման անձնակազմը, իր փորձի վրա հիմնվելով, պատրաստ է կանխատեսել պահանջմունքները և արձագանքել դրանց.

3) գործառնական, կառավարման և այլ մասնակիցների ներգրավվածություն.

4) տեղեկատվությունն ստուգվում է՝ համոզվելու համար դրա պատշաճության և ճշտության մեջ.

5) տեղեկատվությունը պետք է հասցվի հակաականային գործողությունների բոլոր մասնակիցներին:

8. Տեղեկատվության անհրաժեշտության գնահատումը պետք է ներառի յուրաքանչյուր մասնակցի հետ քննարկումները, որոնք ներառում են՝

1) յուրաքանչյուր մասնակցի կողմից առկա տեղեկատվության տրամադրումը.

2) տեղեկատվության հավաքագրման հաճախականության, ձևաչափի և եղանակի հստակեցումը.

3) ստացվող տեղեկատվության որակը երաշխավորելու համար անհրաժեշտ գործընթացները.

4) այն եղանակները, որոնցով ստացվող տեղեկատվությունը պետք է վերլուծվի՝ երաշխավորելու համար ստացվող տեղեկատվության հստակությունը.

5) տեղեկատվության տարածման և զեկույցների ձևաչափերը.

6) հակաականային գործողությունների նպատակով օգտագործվող առանցքային քանակական և որակական կատարողական ինդիկատորները:

9. Տեղեկատվության հավաքագրման փուլը սահմանում է, թե որտեղ և ինչպես կարող է հավաքվել պահանջվող տեղեկատվությունը և ինչպես գնահատել այն: Այն պետք է նախագծված լինի՝ ելնելով այդ տեղեկատվության օգտագործման նպատակներից: Տեղեկատվությունը հավաքագրվում է հետևյալ սկզբունքներով՝

1) տեղեկատվության հավաքագրում՝ առանց սեռական խտրականության.

2) տեղեկատվության հավաքագրման միասնական և ստանդարտացված գործընթացներ.

3) տեղեկատվության բացահայտման նորարարական մոտեցումներ.

4) տեղեկատվության հավաքագրման գործընթացում որակի կառավարում.

5) տեղեկատվության ստուգում և գնահատում՝ տեղեկատվության պատշաճությունն ու ամբողջականությունը, ինչպես նաև առկա այլ տեղեկատվության հետ համադրելիության ապահովման նպատակով.

6) տեղեկատվության աղբյուրների և դրանց հավաստիության դասակարգում:

10. Տեղեկատվության օբյեկտիվ և շարունակական վերլուծությունը նվազեցնում է սուբյեկտիվության աստիճանը և բարձրացնում ստացվող տեղեկության որակը: Տեղեկատվության վերլուծությունը ներառում է՝

1) օգտագործվող եզրույթների միասնական բնորոշումը.

2) ցածրորակ տեղեկության կառավարման մեթոդաբանությունը՝ համապատասխան չափորոշիչներով.

3) տեղեկատվության խմբավորման և կառուցվածքի որոշման մեթոդաբանությունը.

4) հակակաանային գործողություններից և այլ աղբյուրներից ստացվող տեղեկատվության խաչաձև հղումների մեթոդաբանությունը.

5) համապատասխան միտումների բացահայտման մեթոդաբանությունը:

11. Տեղեկատվության տարածումը հակակաանային գործողություններում ընդգրկված մասնակիցներին տրվող տեղեկություններն են, որը պետք է ներառի՝

1) անձանց շրջանակը.

2) ստացվող տեղեկատվության տեսակը.

3) տեղեկատվության ամփոփման եղանակը.

4) տեղեկատվության տարածման հաճախականությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 23-ի N 454 - Ն որոշման

Չ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Չ Ն Ե Ր

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԱՐԱԾՔԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ

1. Սույն չափորոշիչներն սկզբունքներ են սահմանում վտանգավոր տարածքի նվազեցման նպատակով քաղաքականության մշակման համար, ինչպես նաև սահմանում են ԱԳԱՄ-ի պարտավորությունները:

I. ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԱՐԱԾՔԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1. Վտանգավոր տարածքի նվազեցումն ապացույցների վրա հիմնված որոշումների ընդունման գործընթաց է, որն օգնում է որոշել, թե որ տարածքի նկատմամբ պետք է իրականացվեն հետագա ականազերծման գործողությունները: Այն ներառում է վտանգավոր տարածքների բացահայտումը, ոչ տեխնիկական հետազոտության միջոցով տարածքի ռիսկի ժխտումը, տեխնիկական հետախուզության միջոցով տարածքի կրճատումը, ինչպես նաև ականազերծումը:

2. Վտանգավոր տարածքի նվազեցումը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) ականապատվածության մասին ցանկացած տեղեկատվություն պետք է գնահատվի տեխնիկական և (կամ) ոչ տեխնիկական հետախուզության միջոցով ստացված ապացույցների, ինչպես նաև տարածքի մասին գոյություն ունեցող ցանկացած տեղեկատվության հիման վրա: Նոր տեղեկատվությունը, որը չի վկայում տարածքի ականապատվածության մասին, կամ դրա արդյունքում տարածքի կասկածելիության մասին որոշում չի ընդունվում, չպետք է ռիսկի ժխտման հիմք հանդիսանա: Տարածքի

ականապատվածության մասին որոշումը չպետք է ընդունվի միայն ոչ տեխնիկական հետախուզության տվյալների հիման վրա.

2) վտանգավոր տարածքները պետք է դասակարգվեն կասկածելի վտանգավոր տարածքների և հաստատված վտանգավոր տարածքների՝ կախված այն բանից, թե, արդյո՞ք, առկա են վտանգավորության ուղղակի թե անուղղակի ապացույցներ: Այն տարածքները, որոնց վերաբերյալ առկա են միայն անուղղակի ապացույցներ, պետք է դասակարգվեն որպես կասկածելի վտանգավոր տարածքներ (ԿՎՏ): Այն տարածքները, որոնց ականապատվածության վերաբերյալ առկա են ուղղակի ապացույցներ, պետք է դասակարգվեն որպես հաստատված կասկածելի տարածքներ (ՀԿՏ).

3) ոչ մատչելի վայրերը կամ այն տարածքները, որոնց վերաբերյալ առկա է սահմանափակ տեղեկատվություն, չպետք է ինքնըստինքյան դասակարգվեն որպես ԿՎՏ: Տարածքներն այդպիսին կարող են ճանաչվել միայն բավարար ապացույցների առկայության դեպքում.

4) տարածքը չպետք է դասակարգվի որպես կասկածելի՝ միայն այն պատճառով, որ մարդիկ վախենում են մտնել այդ տարածքը.

5) տարածքը որպես ԿՎՏ կամ ՀՎՏ դասակարգելուն պետք է հաջորդի հետա-խուզության կամ մաքրման գործողությունների առաջնահերթության հարցի լուծումը: Որոշ դեպքերում նպատակահարմար է միանգամից անցնել մաքրման գործողություն-ներին: Որպես կանոն, գործընթացն իրականացվում է ոչ տեխնիկական, տեխնիկական հետախուզության և մաքրման փուլերով, քանի դեռ տարածքի ականապատվածության կասկածը վերացված չէ.

6) վտանգավոր տարածքի նվազեցման արդյունավետ գործընթացը կնշանակի, որ մաքրման ենթակա տարածքն ավելի հստակ նշագծված է, ինչպես նաև մաքրման գործընթացներն առավել արդյունավետ կիրառված են.

7) տարածքի նկատմամբ ռիսկը պետք է վերացված ճանաչվի, տարածքը պետք է նվազեցվի կամ օգտագործման հանձնվի միայն փաստաթղթերով և ապացույցներով հիմնավորված վստահելի ընթացակարգերի կիրառումից հետո.

8) այն ԿՎՏ-ի կամ ՀՎՏ-ի ռիսկը, որի օգտագործման անհրաժեշտությունը համայնքի համար փոքր է, չպետք է ժխտվի՝ միայն հիմք ընդունելով այդպիսի անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, այդպիսի տարածքների մաքրմանը կարող է տրվել նվազ առաջնահերթություն:

II. ՈՒՂՂԱԿԻ ԿԱՄ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ

3. Սույն չափորոշիչների իմաստով՝ անուղղակի ապացույց են համարվում՝

1) իր հատկություններով բերրի հողի չօգտագործումը.

2) տեղի բնակչության (նախկինում ռազմական գործողությունների մասնակիցների) հաղորդումները.

3) ականների (ՊՊՄ) մասին հաշվառումները, երբ այդպիսի հաշվառումների հավաստիությունը վստահություն չի ներշնչում.

4) այլ հայտնի ականապատված տարածքների, ռազմական գործողությունների վարման ձևերի կամ այլ պատմական աղբյուրների ուսումնասիրությունը.

5) նախկին մարտական գործողությունների տարածքները.

6) նախկին ուսումնասիրությունների ապացույցները, որոնց վերաբերյալ ուղղակի ապացույցներ չկան.

7) ականների (ՊՊՄ) հետ կապված վթարները կամ պատահարները, երբ այդպիսի վթարի կամ պատահարի տեղը հստակ չի կարող որոշվել:

4. Ուղղակի ապացույցներ են՝

1) ականների (ՊՊՄ) մասին հաշվառումները, որոնց վստահելիությունը հաստատված է.

2) ականների (ՊՊՄ), դրանց մասերի, հատվածների կամ ականային խոռոչների տեսողական դիտարկումը.

3) ցանկացած շարժման արդյունքում ականների (ՊՊՄ) դետոնացիան.

4) ականների առկայության մասին վկայող նշանները, ցանկապատերը կամ այլ առարկաներ.

5) ականների (ՊՊՄ) հետ կապված վթարները կամ պատահարները, երբ այդպիսի վթարի կամ պատահարի տեղը հստակ որոշվել է:

5. Հնարավորության դեպքում վտանգավոր տարածքները պետք է բնութագրվեն վտանգի բնույթով, ինչպիսիք են, օրինակ, կլաստերային ականապատ տարածք և այլն ապահովելու համար հակաականային գործողությունների առաջնահերթության ճիշտ սահմանումը: Այն դեպքերում, երբ բավարար ապացույցներ կան տարածքը որպես ԿՎՏ տարածք ճանաչելու համար, սակայն վտանգի բնույթի մասին վկայող ապացույցներն անբավարար են, տարածքի վտանգի բնույթը պետք է գրանցվի որպես անհայտ:

6. ՀՎՏ-ի սահմանները պետք է ընդգրկեն այն տարածքները, որոնց վերաբերյալ առկա են ականներ (ՊՊՄ) տեղադրված լինելու ուղղակի ապացույցներ, կամ ականների տարածվածության տրամաբանությունը վկայում է, որ նշված տարածքում ականներ (ՊՊՄ) տեղադրված լինելու հավանականությունը մեծ է: Շրջապատող տարածքները, որոնց վերաբերյալ առկա են միայն անուղղակի ապացույցներ, պետք է դասակարգվեն որպես ԿՎՏ: Բոլոր դեպքերում սահմանները պետք է որոշվեն ապացույցների հիման վրա:

7. Վտանգավոր տարածքը կրճատելու նպատակով գործողության չափանիշները կախված են տեղական առանձնահատկություններից, սակայն բոլոր դեպքերում տարածքը

կրճատելուց կամ ռիսկը ժխտելուց առաջ անհրաժեշտ է ունենալ տարածքում ականներ (ՊՊՄ) առկա չլինելու վստահության բավարար մակարդակ, որն արտահայտվում է գործընթացին մասնակցող անձանց համաձայնությամբ: Այս առումով մասնակիցներ են ԱԳԱՄ-ը, ականազերծող կազմակերպությունները, հողատարածքի սեփականատերերը (օգտագործողները):

8. Ցանկացած դեպքում՝ վտանգավոր տարածքի կրճատման չափորոշիչները կհամարվեն բավարարված, երբ ակնհայտ է, որ՝

1) այն տարածքներում, որոնց վերաբերյալ ականների (ՊՊՄ) առկայության ուղղակի ապացույցներ չկան, գործադրված ողջամիտ ջանքերը բավարար էին ականապատվածության վերաբերյալ ապացույցներ գտնելու համար, և (կամ)՝

2) այն տարածքներում, որոնց վերաբերյալ ապացույցներ գտնվել են, գործադրված ողջամիտ ջանքերը բավարար էին այդպիսի ականապատվածությունը հայտնաբերելու և վերացնելու համար:

III. ՏԱՐԱԾՔԻ ՄԱՔՐՎԱԾ, ԿՐՃԱՏՎԱԾ ԿԱՄ ՌԻՍԿԸ ԺԽՏՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ

9. Մինչև տարածքի ռիսկի ժխտումը, կրճատումը կամ մաքրված տարածքի ընդունումը պետք է բավարար վստահությամբ հաստատվի, որ բոլոր ողջամիտ ջանքերը գործադրվել են տարածքի մաքրման համար, և այլևս առկա չեն ապացույցներ, որ տարածքն ականապատված է, կամ առկա է ռիսկ:

10. Սույն չափորոշիչների իմաստով՝ «ողջամիտ ջանքեր» արտահայտությունը նշանակում է, որ գործադրված ջանքերը բավարար են բարձր մակարդակի վստահություն ունենալու համար՝ այն առումով, որ ռիսկը ժխտված, կրճատված կամ մաքրված տարածքն այլևս ականապատված կամ ՊՊՄ-ով աղտոտված չէ: Ջանքը ողջամիտ է, երբ անհրաժեշտ վերլուծություններով ակնհայտ է, որ գործադրված ջանքերը բավարար էին

ականապատվածության վերաբերյալ ապացույցները բացահայտելու համար, ինչպես նաև՝ երբ ականները (ՊՊՄ) հայտնաբերված և ոչնչացված են:

11. «Ողջամիտ ջանքեր» արտահայտությունն առնվազն պետք է ներառի՝

1) տեղեկատվության բոլոր աղբյուրների բացահայտումը և դրանց մատչելիությունը.

2) պատշաճ տեղեկատվական կառավարման համակարգերի հիմնումը և պահպանումը.

3) պատշաճ որակի կառավարման համակարգերի հիմնումը և պահպանումը.

4) անհրաժեշտ գործողությունների իրականացումը՝ ականապատվածության վերաբերյալ ապացույցները որոշելու, վերլուծելու և դրանց արձագանքելու համար.

5) վտանգավոր տարածքի կրճատման գործընթացի մոնիթորինգի իրականացումը և այդ մոնիթորինգի ընթացքում բացթողումների պարբերական շտկումը.

6) ռիսկը ժխտված, կրճատված կամ մաքրված տարածքների որակի մոնիթորինգը և բացթողումների շտկման համար գործողությունների նախաձեռնումը.

7) համապատասխան արդյունավետ հաղորդակցության համակարգի հիմնումը և պահպանումը՝ երաշխավորելու համար, որ մասնակիցներն ընկալում և ընդունում են վտանգավոր տարածքի կրճատման գործընթացը:

12. ԱԳԱՄ-ի կողմից հաստատվում են՝

1) ականապատվածության ապացույցների հավաքման, զեկուցման և վերլուծության ջանքերի ողջամիտ մակարդակի չափորոշիչները.

2) ոչ տեխնիկական հետախուզության եղանակով ստացված տեղեկատվության գնահատման և դրա քանակական արտահայտության վերաբերյալ չափանիշները.

3) վերլուծական եզրակացություններ անելու համար անհրաժեշտ տեղեկատվության բավարարության չափանիշը:

13. Որակի կառավարումը վտանգավոր տարածքի նվազեցման գործընթացում ներառում է որակի հավաստումը և որակի հսկողությունը:

14. Որակի հավաստումը բաղկացած է հետախուզություն և մաքրում իրականացնող կազմակերպությունների մոնիթորինգից: Այն պետք է երաշխավորի, որ հետախուզություն և մաքրում իրականացնող կազմակերպություններն ունեն բավարար հմուտ անձնակազմ, համապատասխան սարքավորումներ և կիրառում են պատշաճ քաղաքականություն, որոնք համաձայնեցված են սույն չափորոշիչներով սահմանված կարգով:

15. Որակի հսկողությունը բաղկացած է գնահատումից, որի նպատակը երաշխավորելն է, որ վտանգավոր տարածքի նվազեցման գործընթացն իրականացվել է սահմանված պահանջներին համապատասխան: Ռիսկը ժխտված, կրճատված կամ մաքրված ցանկացած տարածքի ստուգում պետք է հաստատի համապատասխան գործողության որակը: Հետմաքրման ձևական ստուգումները միշտ չէ, որ անհրաժեշտ կամ արդարացված կարող են լինել, սակայն ռիսկը ժխտված, կրճատված կամ մաքրված տարածքի երկարաժամկետ մոնիթորինգը պետք է լինի վտանգավոր տարածքի նվազեցման գործընթացի բաղկացուցիչ մասը:

IV. ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄԸ

16. Տեղեկատվական կառավարումը վտանգավոր տարածքի նվազեցման գործընթացի առանցքային մասերից է: Փաստաթղթավորումը տալիս է պատշաճ ապացույցներ պատշաճ ընթացակարգեր և համակարգեր կիրառված լինելու մասին:

17. Որակի փաստաթղթերն անհրաժեշտ են՝

1) որպես ապացույց՝ ԿՎՏ և ՀՎՏ ձևավորելու մասին որոշումներ ընդունելու կամ ռիսկը ժխտելու, կրճատելու կամ մաքրված լինելու արդյունքում տարածքը հանձնելու համար.

2) որպես ներքին և արտաքին հսկողության ապացույցներ.

3) ռիսկը ժխտված, կրճատված կամ մաքրված տարածքի հանձնումից հետո վտանգ ծագելու դեպքում համապատասխան քննություն անցկացնելու կամ պատասխանատվություն կիրառելու համար:

18. Բացի տարածքների ռիսկայնության մասին տեղեկատվությունից, փաստաթղթավորման ենթակա են նաև հետևյալ տեղեկությունները՝

1) ինչ է հայտնաբերվել, երբ և որտեղ.

2) ինչ է արվել, որտեղ և երբ:

19. Ականապատվածության վտանգի բացահայտման դեպքում ականազերծող կազմակերպությունները պետք է գրանցեն ականի (ՊՊՄ-ի) տեսակը, խորությունը, աշխարհագրական դիրքը և ականի (ՊՊՄ-ի) վիճակը:

20. Գրանցման ենթակա են նաև տարածքի մաքրումը, տեխնիկական հետախուզությունը և ոչ տեխնիկական հետախուզությունը: Վտանգի տարբեր տեսակների առնչությամբ իրականացվող հետախուզությունը և մաքրումը ենթակա են գնահատման և վերլուծության:

21. Աշխարհագրական բնույթի տեղեկությունները պետք է հավաքվեն պատշաճ եղանակով, մանրամասնորեն և պարբերաբար՝ վտանգավոր տարածքի նվազեցման համար անհրաժեշտ տեղեկատվության վերլուծությունն ապահովելու նպատակով: Տեղեկատվության հավաքման և կառավարման համակարգերը պետք է մշակվեն այնպես, որպեսզի հնարավորություն ընձեռվի տարբերակելու տեղեկատվությունը՝ ըստ ստացման եղանակի և ըստ ռիսկի:

22. Ականների և (կամ) ՊՊՄ-ների, ականապատ տարածքների, գործունեության, վտանգավոր տարածքի նվազեցման գործընթացում ընդունվելիք որոշումների մասին տեղեկատվությունը պետք է հասանելի լինի բոլոր ստացողներին՝ վերջիններիս համար ընդունելի ձևաչափով կամ եղանակով:

23. Բարձր մակարդակի հաշվետվողականությունը, ինչպիսիք են միջազգային պայմանագրին համապատասխանության մասին հաշվետվությունները, պետք է ներկայացվի ընդունված գործընթացներին համապատասխան:

V. ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

24. Վտանգի ռիսկը կարող է նվազեցվել ռիսկը ժխտված, կրճատված կամ մաքրված տարածքների մոնիթորինգի և հետախուզության ու մաքրման ռեսուրսները հրապարակելու միջոցով, եթե հետագայում հայտնաբերվել են ականներ (ՊՊՄ): Այն դեպքում, երբ բացահայտվել են ականներ (ՊՊՄ), արագ արձագանքը և թափանցիկ քննությունը հնարավորություն կտան պահպանելու հանրության վստահությունն ակա-նազերծման գործողությունների նկատմամբ: Այս առումով ԱԳԱՄ-ը պետք է հաստատի հստակ ընթացակարգեր, որոնք կարող են ներառել՝

1) ռիսկը ժխտված, կրճատված կամ մաքրված տարածքների մոնիթորինգի իրականացումը ողջամիտ ժամանակ անց՝ վստահեցնելու համար, որ համայնքն օգտագործում է անվտանգ տարածք.

2) նախկինում ռիսկը ժխտված, կրճատված կամ մաքրված տարածքներում հայտնաբերված ականների (ՊՊՄ) առնչությամբ հաշվետվողականության և հետա-քննության մեխանիզմների մշակումը.

3) վտանգավոր տարածքի նվազեցման վերաբերյալ որոշման ընդունման համար հիմք ծառայած փաստաթղթերի պարբերական վերանայումը.

4) հակաականային գործողությունների ընթացքում օգտագործվող գործիքների հարմարեցումը հանկարծակի հայտնաբերված ականների (ՊՊՄ-ների) հետ աշխատանքին և լրացուցիչ ուսումնասիրությունների անցկացումը.

5) նախկինում ռիսկը ժխտված տարածքի վերադասակարգումը ՀԿՏ-ի և համապատասխան տեղեկատվական շտեմարանների թարմացումը՝ ուղղակի ապացույցների հայտնաբերման դեպքում.

6) անհրաժեշտության դեպքում վտանգավոր տարածքի նվազեցման վերաբերյալ որոշում ընդունելու պատճառների հետաքննությունը՝ համապատասխան քաղաքականությունների շտկումով.

7) սահմանափակումների և նախազգուշացումների կիրառումը համապատասխան վտանգավոր տարածքների նկատմամբ՝ արտացոլելու համար վտանգի բնույթը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 23-ի N 454 - Ն որոշման

Չ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Չ Ն Ե Ր

ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

1. Սույն չափորոշիչները սահմանում են հակաականային գործունեության շրջանակներում ականազերծման մասին պայմանագրերի կազմման և կնքման գործընթացի սկզբունքները:

I. ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

2. Ականազերծման գործողությունների մասին պայմանագիրը պաշտոնական համաձայնագիր է երկու կամ ավելի կողմերի միջև՝ սահմանելու համար իրականացման ենթակա աշխատանքը, արդյունքները, կողմերի պարտավորություններն ու ականազերծման գործընթացում ծագող այլ հարաբերություններ:

3. Ականազերծման գործողությունների մասին պայմանագրերի մշակումը պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա՝

1) պայմանագրում պետք է ճանաչվեն այն միջավայրն ու պայմանները, որոնցում տեղի է ունենալու գործողությունը.

2) պայմանագիրը պետք է հավաստի կողմերի կարողություններն ու ընդունակությունները.

3) պայմանագիրը պետք է իրատեսական լինի՝ պայմանագրի առարկա հանդիսացող գործողության պահանջների և այլ պարտավորությունների ամբողջական կատարման առումով.

4) պայմանագրի շարադրանքը պետք է լինի հստակ, հակիրճ և ոչ երկիմաստ:

II. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

4. Ականազերծման գործողությունների ոլորտում կիրառվող պայմանագրերը հիմնականում բաժանվում են երկու խմբի՝

1) ստույգ գնով պայմանագրեր փոխհամաձայնեցված ժամանակահատվածում նախորոշված ծավալի աշխատանք կատարելու կամ նախորոշված քանակությամբ ապրանք մատակարարելու մասին.

2) հավելյալ ծախսերով պայմանագրեր:

5. Պատվիրատուն ստույգ գնով պայմանագրով ստույգ գին է վճարում կապալառուին՝ անկախ նրանից, թե իրականում կապալառուն որքան ծախս է կատարում պայմանագրի առարկան ապահովելու համար: Այս դեպքում կապալառուն է կրում կորստի բոլոր ռիսկերը, որոնք կապված են կանխատեսված ծախսերի ավելացման հետ, սակայն շահում է, եթե ծախսերն ավելի քիչ են լինում, քան կանխատեսվում էր:

6. Ստույգ գնով պայմանագրերը խթան են կապալառուի համար՝ պատշաճ մակարդակով կառավարելու և նվազեցնելու գործողության ծախսերը՝ արդյունավետության բարձրացման միջոցով կամ ծախսերի ավելի բարձր արդյունավետությամբ մոտեցումների կիրառմամբ: Դրանք նաև ուղենիշ են պատվիրատու կազմակերպությանը՝ հետագա պայմանագրերում գործողության արժեքը, պահանջներն ու պայմանները ճշգրտելու համար:

7. Ստույգ գնով պայմանագրերը կարող են ունենալ մի շարք հատուկ հետևանքներ՝

1) պատվիրատու կազմակերպությունն ստիպված կլինի կապալառուին վճարել լրացուցիչ գումար, եթե պայմանագրում ամրագրված է, որ կապալառուն է կրում ծախսերի անհայտ լինելու ռիսկը՝ որպես պայմանագրի արժեքի մի մաս: Սույն կետում նշված հանգամանքը կարող է հանգեցնել պատվիրատու կազմակերպության և կապալառուի միջև վեճերի՝ լրացուցիչ ծախսերի ծագման պատճառների վերաբերյալ.

2) եթե պայմանագրի համաձայն կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքի որակն ամբողջապես սահմանված կամ ստուգման ենթակա չէ, ապա պատվիրատու կազմակերպությունը կկանգնի այն վտանգի առջև, որ կապալառուն կարող է պայմանագրի առարկա հանդիսացող աշխատանքի արդյունքի որակի հաշվին նվազեցնել կատարվող ծախսերը.

3) պատվիրատու կազմակերպությունն ստիպված կլինի գումար վճարել չկատարված աշխատանքի համար, քանի որ աշխատանքն սկսելուց անմիջապես հետո ստացված ավելի ստույգ տեղեկությունների համաձայն կատարվելիք աշխատանքը չի տա կանխատեսվող արդյունքը.

4) եթե պայմանագրով սահմանված ստույգ գինը շատ ցածր է կատարվելիք աշխատանքների իրական արժեքի համեմատ, ապա պատվիրատու կազմակերպությունը կարող է կանգնել փաստի առջև, որ կապալառուն ի վիճակի չի լինելու ապահովել պայմանագրային պարտավորությունների կատարումը, ինչը և կարող է հանգեցնել պատվիրատու կազմակերպության և կապալառուի միջև տարաձայնությունների:

8. Հավելյալ ծախսերով պայմանագրի դեպքում պատվիրատու կազմակերպությունը փոխհատուցում է կապալառուի փաստացի կատարած ծախսերը, ինչպես նաև՝ այդ ծախսերի փոխհամաձայնեցված որոշակի տոկոսի չափով լրացուցիչ վճար:

9. Հավելյալ ծախսերով պայմանագրերի կիրառումը պատվիրատու կազմակերպության համար կարող է ունենալ մի շարք առավելություններ՝

1) ծախսերը սահմանափակված են փաստացի կատարված աշխատանքներով.

2) կապալառուն չի կարող չափազանց մեծ շահույթ ունենալ.

3) կապալառուի կողմից պայմանագրից հրաժարվելը չի հանգեցնի չկատարված աշխատանքների դիմաց վճարման կամ այլ անբարենպաստ հետևանքների:

10. Հավելյալ ծախսերով պայմանագրերը պատվիրատու կազմակերպության համար կարող են նաև անբարենպաստ լինել հետևյալ պատճառներով՝

1) պայմանագրի ընդհանուր արժեքը հստակ սահմանված չլինելու արդյունքում պատվիրատուն հնարավորություն չի ունենա վերահսկելու ծախսերը.

2) չնայած այն հանգամանքին, որ կապալառուն պատասխանատու է ծախսերի վերահսկման համար, սակայն որքան մեծ լինեն ծախսերը, այնքան ավելանում է կապալառուի կողմից բարձր շահույթ ստանալու հավանականությունը.

3) կապալառուն կարող է առաջացնել այնպիսի ծախսեր, որոնք առավելագույն շահույթ են ապահովում կապալառուին՝ գործընթացի շրջանակներում կնքված այլ պայմանագրերից, օրինակ, սարքավորումների գնման ընդարձակման կամ անձնակազմի գերհագեցվածության միջոցով՝ ի հաշիվ առավել փոքրաթիվ անձնակազմի ուսուցման վրա կատարվելիք ծախսերի.

4) աշխատանքի արժեքը կարող է արհեստականորեն բարձրանալ՝ ի հաշիվ պայմանագրի վարչարարության լրացուցիչ պահանջների:

11. Նպատակահարմար տեսակի պայմանագրի ընտրությունը կամ դրանց համակցությունը կախված կլինի այն միջավայրից, որում իրականացվելու է տվյալ գործողությունը, կատարվելիք աշխատանքների բնույթից, պատվիրատու կազմակերպության և հնարավոր կապալառուի միջև նախկինում ունեցած հարաբերություններից, գործընթացի տեխնիկական իմացությունից:

III. ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Ականազերծման գործողությունների մասին պայմանագիրը պետք է կազմված լինի միմյանց փոխկապակցված հետևյալ երեք բաղադրիչներից՝

1) իրավական, որը նկարագրում է կողմերի միջև հարաբերությունները և ընդհանուր պահանջներն ու պարտավորությունները.

2) տեխնիկական, որը նկարագրում է աշխատանքների կատարման ձևերը և ակնկալվող արդյունքները.

3) գնային, որը նկարագրում է պայմանագրի արժեքը և վճարումների կառուցվածքն ու մեթոդաբանությունը:

13. Պայմանագրի իրավական բաղադրիչը ներառում է հետևյալ մանրամասների նախատեսումը՝

1) կողմերը և նրանց իրավունակությունը.

2) կնքման ամսաթիվը.

3) առարկան.

4) օգտագործվող սահմանումները և դրանց մեկնաբանությունները.

5) կապալառուի գործողությունները, այդ թվում՝ ենթակապալառուի ներգրավման հնարավորությունը.

6) պատվիրատուի գործողությունները.

7) անվտանգության և աշխատանքի հիգիենայի (ԱևԱՀ, S&OH) կանոնները.

8) կապալառուի ստանձնած ապահովագրական երաշխիքները (օրինակ, բժշկական, կյանքի, հաշմանդամության, աշխատողների փոխհատուցում և ապահովագրություն երրորդ կողմի պատասխանատվությունից).

9) պատվիրատուի և կապալառուի ընթացիկ ու մնացորդային պարտավորությունները.

10) միջադեպերի մասին զեկուցման ընթացակարգերը.

11) կապալառուի կողմից պատվիրատուին տրամադրվող զեկույցների կառուցվածքն ու ժամկետները.

12) աշխատանքներից շեղումների համար կիրառվելիք համակարգը և ընթացակարգերը.

13) աշխատանքների դադարեցման պայմանները.

14) աշխատանքների կատարման համար գնված սարքավորումների և այլ գույքի մնացորդային սեփականության հարցերը.

15) գաղտնիության և չտարածման պահանջները.

16) անխուսափելի հետաձգման կառավարումը կամ ֆորս մաժորը.

17) վեճերի լուծման համակարգերն ու ընթացակարգերը:

14. Պայմանագրի տեխնիկական բաղադրիչը ներառում է հետևյալ մանրամասների նախատեսումը՝

1) պայմանագրի անհրաժեշտությունը և նպատակները.

2) պայմանագրում ներգրավված այլ կողմերի դերը, օրինակ, որակի ապահովման (ՈԱ, QA) անկախ գործակալությունները կամ պատվիրատու կազմակերպության ներկայացուցիչները.

3) պատվիրատուի նպատակները և պայմանագրի առարկան ապահովող գործողությունների կառուցվածքը.

4) պայմանագրի կատարման արդյունքները.

5) պայմանագրի ժամկետը և պայմանագրի առարկան կազմող գործողությունների նպատակահարմար տևողությունը.

6) պայմանագրի գործողության ընթացքում առանձնահատուկ կատարողականները և դրանց ժամկետները.

7) կապալառուի կողմից ընտրված գործողության ձևի նկատմամբ սահմանափակումները կամ պահանջները.

8) աշխատանքների կատարման ծրագրի մշակման և դրանց ապահովման վերաբերյալ պահանջները.

9) զեկուցումներին առաջադրվող պահանջները՝ ներառյալ ընթացիկ զեկույցները և հետպայմանագրային աուդիտը, ներկայացվող փաստաթղթերը.

10) որակի կառավարման (ՈԿ, QM) պահանջները.

11) ԱևԱՀ-ի պահանջները.

12) բնապահպանական պարտադիր խնդիրները.

13) վարչարարության և լոգիստիկայի հարցերը, ինչպիսիք են ապահովագրության պահանջները, սարքավորումների, ապրանքների և անհրաժեշտության դեպքում այլ աջակցության վերաբերյալ մանրամասները:

15. Պայմանագրի գնային բաղադրիչի կառուցվածքը կախված կլինի պայմանագրի տեսակից, սակայն այն պետք է ապահովի հետևյալ մանրամասների նախատեսումը՝

1) պայմանագրի ընդհանուր գինը կամ միավորի արժեքը, ընդ որում՝ ներառյալ յուրաքանչյուր միավորի արժեքի չափման միավորը.

2) վճարումների կառուցվածքը, հաճախականությունը և ձևը՝ ներառյալ կանխավճարները և վերականգնման մեխանիզմները՝ ըստ նպատակահարմարության.

3) վճարումների համար հիմք հանդիսացող կատարողականները կամ գործողությունները, իսկ դրանց չկատարման կամ թերի կատարման դեպքում՝ տուգանքների համակարգը:

16. Պայմանագրով կապալառուին ներկայացվող բոլոր պահանջները պետք է համապատասխանեն ՀԱԳԱՉ-ներին, և պայմանագրում անմիջականորեն կամ հղումներով դրանց միջև կապի նախատեսումն ունի էական նշանակություն:

17. Պատվիրատու կազմակերպությունը կապալառուի ընտրությունն իրականացնում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

18. Կապալառուի ընտրության գնահատումը հիմնվում է կապալառուի հետևյալ կարողությունների վրա՝

1) պահանջվող աշխատանքն իրագործելու տեխնիկական հնարավորություններ և ներուժ՝ աշխատուժի, սարքավորումների, տեխնիկայի առումով.

2) ականազերծման գործողությունների առկա փորձ և վարկանիշ.

3) կազմակերպության կառավարման, վերահսկողության և մոնիթորինգի, ծախսերի և որակի կառավարման, խնդիրների լուծման կառուցվածք ու համակարգ.

4) հիմնական անձնակազմի թիվը և որակավորումները, նրանց փորձը.

5) համապատասխանություն ԱԳԱՄ-ի պահանջներին:

19. Գնահատման գործընթացում էական են նաև ականազերծման գործողությունների վերաբերյալ ցանկացած կազմակերպության արձանագրությունները և դրանց առնչությամբ իրականացված պաշտոնական հետաքննությունների մասին զեկույցները, որոնք կարող են վկայել վտանգավոր գոտիներում սահմանափակ փորձի կամ պատահարներն արձանագրելու պարտավորությունից խուսափելու գործելաոճի մասին:

20. Պատվիրատու կազմակերպությունը կարող է կարիք ունենալ ներգրավելու նաև արտաքին խորհրդատուի, եթե սեփական անձնակազմը չունի անհրաժեշտ բավարար տեխնիկական փորձառություն՝ կառավարելու համար ականազերծման գործողությունների կապալառուի ընտրության գործընթացը:

IV. ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

21. Ականազերծման գործողությունների մասին պայմանագրի արդյունավետ կատարման էական պայման է պատվիրատուի և կապալառուի հստակ պատկերացումը պայմանագրի հնարավոր ծախսերի մասին՝ նախքան գործընթացի մեկնարկը: Պայմանագրի արդյունքների ապահովման համար կապալառուն պետք է նաև աշխատանքների ընթացքում կառավարի ծախսերը՝ որևէ ժամանակահատվածում կատարված աշխա-

տանքների ծավալը նույն ժամանակահատվածում իրականացված փաստացի ծախսերի հետ համեմատելու միջոցով:

22. Պատվիրատու կազմակերպությունները և կապալառուները պետք է իրազեկ լինեն հետևյալ երկակի սխալներից խուսափելու մասին՝

1) ծախսերի կանխատեսվող ցուցանիշը և ժամկետը չպետք է օգտագործվեն որպես հիմքային տվյալներ՝ ծախսերի փաստացի ցուցանիշի հետ համեմատելու համար: Նման գործելաոճը հնարավորություն չի տալիս ստույգ ծախսերով չափելու աշխատանքների այն ծավալը, որն իրականացվել է տվյալ ժամանակահատվածում.

2) ծախսերի դիմաց իրականացված աշխատանքները չպետք է արձանագրվեն վճարումների հաշիվ-ապրանքագրերի ամսաթվի դրությամբ: Չնայած այն հանգամանքին, որ նշված միջոցը հնարավոր է դարձնում խելամիտ համեմատությունը, սակայն կարող է խնդիրներ առաջացնել աշխատանքները գնահատելու համար, եթե դրանք կատարվել են թերություններով: Առավել նպատակային է ծախսերի փաստացի հատկացումից հետո կատարվող համեմատությունը:

V. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

23. Պատվիրատու կազմակերպության տեսանկյունից՝ պայմանագրի ժամկետի կառավարման նպատակն է ապահովել, որպեսզի պայմանագրով նախատեսված արդյունքներն ստացվեն այն ժամանակահատվածում, որն արդարացնում է պայմանագրի ծախսերը, ինչպես նաև կանխատեսել վճարման ժամանակացույցին համապատասխանող ֆինանսների անհրաժեշտ ծավալները:

24. Կապալառուի տեսանկյունից պայմանագրի ժամկետի կառավարման նպատակն է ապահովել աշխատուժի, սարքավորումների և այլ ռեսուրսների արդյունավետ և

արտադրողական կիրառումը, պայմանագրով նախատեսված աշխատանքների ժամանակին կատարումը:

25. Պայմանագրի ժամկետի արդյունավետ կառավարումը ներառում է՝

1) պայմանագրի կարևոր բաղադրիչների և առաջադրանքների թիրախային ժամկետների ու կատարողականների ճշգրիտ ապահովումը.

2) թիրախային կատարողականների հստակ ձևակերպումը՝ օգտագործելով GANNT Chart, Cascade Bar Chart կամ նմամատիպ միջոցներ.

3) կատարված աշխատանքների համադրումը թիրախային կատարողականների հետ.

4) աշխատանքների կատարման ընթացքում, անհրաժեշտության դեպքում, թիրախային ժամկետների ու կատարողականների ճշգրտումը՝ պայմանագրի նախանշված արդյունքներն ապահովելու նպատակով:

VI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

26. Պայմանագրի ժամանակին և որակյալ կատարումն ապահովելու համար էական նշանակություն ունի աշխատանքների ընթացքին զուգահեռ դրանց նկատմամբ հսկողության իրականացումը: Հսկողության արդյունավետ համակարգը թույլ է տալիս կանոնավոր կերպով ստուգել աշխատանքների ընթացքը և անհրաժեշտության դեպքում գործողություններ նախաձեռնել՝ պայմանագրի պայմաններից շեղումները բացառելու նպատակով:

27. Հսկողության գործընթացը ներառում է՝

1) աշխատանքի պլանավորումը և կատարողականության հաշվարկը.

2) արդյունքների մոնիթորինգը և դրանց մասին զեկուցումը.

3) ստացված արդյունքների համեմատումը պլանավորված աշխատանքների հետ և հետագա արդյունքների կանխատեսումը.

4) արդյունավետ գործողությունների նախագծումն ու իրականացումը՝ պայմանագրի պայմաններից շեղումները բացառելու կամ դրանք նվազագույնի հասցնելու համար:

VII. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՁԵԿՈՒՑՈՒՄԸ

28. Պայմանագրով նախատեսված արդյունքներին հասնելու համար էական նշանակություն ունի աշխատանքների կատարման ընթացքի մասին զեկուցումը, որի արդյունավետ համակարգը ներառում է հետևյալ պահանջները՝

1) զեկույցները պետք է պատրաստվեն ըստ պլանավորված աշխատանքների և դրանց կատարողականների.

2) զեկույցները պետք է կազմվեն սահմանված ձևաչափով և ապահովեն հստակ պատասխաններ առաջադրված հարցերին.

3) զեկույցները պետք է տրվեն կանոնավոր՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

29. Զեկույցները պետք է վերանայվեն՝ կախված պայմանագրի կատարողականության վիճակից և հաշվի առնելով պայմանագրից շեղումները, աշխատանքների ընթացքում ստացված և վերլուծված նոր տեղեկությունները, մշակված լուծումներն ու դրանց համապատասխան իրականացված գործողությունները: Վերանայման հիմք կարող է հանդիսանալ նաև պայմանագրային գործողության վայրի անմիջական մոնիթորինգը:

VIII. ՀԵՏՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ (ՀՊՎ, PCRS)

30. Հետպայմանագրային վերանայումն ստացված արդյունքների և դրանց հասնելու ձևի համեմատումն է պայմանագրով նախատեսված պայմանների հետ՝

պայմանագրի ուժեղ և թույլ կողմերը հստակեցնելու, հետագա պայմանագրերն առավել արդյունավետ կազմելու համար: Հետպայմանագրային վերանայումն ականազերծման գործողությունների մասին պայմանագրեր նախագծելու, կառավարելու և իրագործելու կարողության զարգացման ու բարելավման արժեքավոր գործիք է:

31. Հետպայմանագրային վերանայումն իրականացվում է՝

1) պայմանագրով նախատեսված աշխատանքներում ներգրավված հիմնական անձնակազմի հետ հարցազրույցների միջոցով.

2) վերլուծելով պայմանագրի պայմաններն ու պայմանագրի կատարման ընթացքում տրված զեկույցները.

3) ստացված արդյունքները համեմատելով «լավագույն պրակտիկայի» չափորոշչի հետ.

4) որոշելով կիրառված գործառնական մեթոդաբանությունների և կառավարման մոտեցումների արդյունավետությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹՅՈՒՆՅԱՆ